8411

3кл3
Зш-47

# 16

# ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ

## ՀԱՄ. Կ. (բ) Կ. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԶՏՄԱՆ ՅԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

ЗКПЗ
3Ա-47

ՊԵՏՀՐԱՏ 1927 ՅԵՐԵՎԱՆ

09.07.2013

24 SEP 2006

*Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք.*

09 DEC 2009

# ՀԱՄ. Կ. (բ) Կ.

# 16-ՐԴ

# ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱ

## ՀԱՄ. Կ. (բ) Կ. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԶՏՄԱՆ ՅԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

(Յեմ. Յարոսլավսկու զեկուցումը 16-րդ համամիութենական կոնֆերենցիայում)

Ա. Մյասնիկյանի անվան Պետական Публичная Библиотека

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1929

8477

ՊԵՏՀՐԱՏԻ II ՏՊԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ
Պատվեր № 593, Հր. № 992
Տիրաժ 5000
Գրառեպվար № 2159 (բ.)

## ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿՈՒ ԶԵԿՈՒՅՑՈՒՄԸ

(16-րդ համամիութենական կուսկոնֆերենցիայում)

Ընկերներ, մենք ունենք նոյեմբերյան պլենումի վորոշումները մեր կուսակցության շարքերում հիմնական զտում և ստուգում կատարելու անհրաժեշտության մասին։ Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի թեզերը ՀամԿ(բ)Կ-ի շարքերը զտելու և ստուգելու մասին, վորոնք հաստատվել եյին և հավանություն եյին գտել Կենտկոմի և ԿՎՀ-ի նախագահության կողմից, նախքան ԿԿ և ԿՎՀ դրանք վորպես հիմք ընդունելը, հրապարակված եյին վաղուց և բավականաչափ ուշադրությամբ քննարկվել եյին տեղերում։ Ավելի մանրամասն մշակված ստուգման հրահանգները նույնպես ուղարկվել եյին տեղերը՝ վորպես նախագիծ։ Կոնֆերենցիայի ժամանակ տեղի ունեցավ վերահսկիչ հանձնաժողովների անդամների խորհրդակցությունը, վորը քննության առավ այդ հրահանգները և մտցրեց մի շարք ուղղումներ։ Ապա ձեզ բաժանվել է Մոսկվայի կազմակերպության ակտիվում իմ տված զեկուցումը, վորը հիմնականում զարգացնում է թեզերում արտահայտված մտքերը։ Տեղերում կատարվել է ագիտացիոն-պրոպագանդիստական նախապատրաստական մեծ աշխատանք, վորով բացատրվել են զտման և ստուգման խնդիրները։ Վորոշ տեղերում հիմնականում կատարվել է նախապատրաստական-կազմակերպչական համարյա ամբողջ աշխատանքը։

Այդպիսով, ըստ էության, կարելի չէր զեկուցումն ավելորդ համարել, յեթե ներկայումս գոյություն ունեցող պրակտիկան ցույց չտար, վոր բոլորն էլ ամենուրեք ճիշտ չեն ըմբռնել կուսակցության շարքերն ստուգելու և զտելու խնդիրները, վոր այժմ արդեն կան մի շարք շեղումներ, վորոնք հենց սկզբից հարկավոր է ուղղել։ Կուսակցության զտման անհրաժեշտությունը հաստատապես արմատացել է թե կուսակցության անդամների և թե ընդհանրապես աշխատավոր մասսաների գիտակցության մեջ։ Չափազանց աչք են ծակում կուսակցության առանձին բջիջների թերությունները, չափազանց աչք է ծակում կուսակցության առանձին անդամների վոչ կոմունիստական վարքագիծը, վորպեսզի 1921 թվականից հետո կարիք չլինի այդ ընդհանուր զտման։ Մինչև այժմ զտման դեմ առարկել են մենշևիկները և մասամբ Լ. Դ. Տրոցկին, վորը «Նոյե Ֆրայե Պրեսսե» թերթում զետեղած իր մի հոդվածում ասում է, թե կուսակցությունը վերջին ժամանակներս, մանավանդ Լենինի մահից հետո, դարձել է անորոշ, անկերպարան մի մասսա, վորովհետև նրա մեջ մտել են այնպիսի մարդիկ, վորոնք ընդհանուր վոչ մի բան չունեն կուսակցության հետ և այլն։ Մի այլ փաստաթղթում նա աշխատում է ապացուցել, վոր կուսակցական մասսան իր դեմքը չունի բոլորովին, նա ահաբեկված է, քվեարկում, ընդունում է այն, ինչ վոր հրամայում են և այլն։ Մենշևիկները փորձում են ապացուցել, թե վորքան էլ զըտենք, իբրև թե միևնույնն է, դրանից վոչինչ չի դուրս գա, մեր կուսակցությունն, իբրև թե, անպետք է, և վոչ մի զտում չի ոգնի։



Ըստ ինքյան հասկանալի չե, վոր այդ մարդիկ նախապես արատավորում են մեր զտումը այն պատճառով, վոր թշնամի յեն մեր կուսակցությանը։ Կուսակցության մեջ իսկ լսվում են, իհարկե, քաղքենիական վորոշ ձայներ, վորոնք յերբեմն թույլ, անվստահ կերպով պնդում են, թե հարկավոր է զտել միայն նրանց, վորոնց վերաբերյալ գործեր կան կամ յեղել են վերահսկիչ հանձնաժողովներում։ Որինակ, այդ քաղքենիներից մեկը «Պրավդայում» գրում է հետևյալը.

... Յես ամեն որ կարդում եմ «Պրավդան», և այնտեղ ամենքը պնդում են մեր կուսակցության զտման մասին։

Յես համաձայն չեմ դրան։ Ինչի՞ չի պետք հուզել մարդկանց։ Ի՞նչ պատճառով։ Ապրում եյինք հո առանց զտման, վատ չեյինք աշխատում, հանգիստ այցելում եյինք ժողովները։ Վերցնենք, որինակ, ինձ։ Յես խաղաղասեր մարդ եմ, աշխատում եմ վոչվոքի հետ չզժտվել, ըստ հնարավորության կիրառել կուսակցության գիծը։ Բացեիբաց ասում եմ՝ ինձ հարգում են բոլորը։ Ամեն ինչ լավ եր, բայց արի ու տես՝ զտում։ Այդ բանը շատ է ազդում ջղերիս վրա, և յես ինչ-վոր վատ յերազներ եմ տեսնում—ինչ-վոր խոզեր և ահագին մկներ։ Վախենում եմ, վոր դուրս կըգցեն կուսակցությունից, կուղարկեն մի բյուրոկրատ կամ քաշքշուկի սիրահար մեկին և՝ ճըղվիր։ Խնդրում եմ վերացնել զտումը... (Պ. Սիդորով, Մոսկվա)։

Յեթե դա յերգիծաբանորեն տրամադրված մի մարդու նամակ չե—նամակի միքանի արտահայտու-

թյունները վերցված են Գոգոլից,—ապա նա, համենայն դեպս, իսկական քաղքենի յե կամ զտման մի թեկնածու, վոր արտացոլում է քաղքենական տրամադրությունները։ Թույլ տվեք, ընկերներ, մեջ բերեմ միքանի թվեր, վորոնք բնորոշում են մեր կուսակցությունը, այն կուսակցությունը, վորը մենք մտադիր ենք զտել։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վիճակագրական բաժնի տվյալներով, առ մեկն հունվարի 1929 թվականի կուսակցության մեջ մենք ունենք ընդամենը 1,530,080 անդամ և թեկնածու։ Նրանցից 71,1 տոկոսը կուսակցության անդամ է, իսկ 28,9 տոկոսը՝ թեկնածու։ Կուսակցության այդ ժամանակվա սոցիալական կազմը հետևյալն էր՝ բանվոր 881,516 հոգի՝ առանց Կարմիր բանակի և նավատորմի. իսկ Կարմիր բանակի և նավատորմի հետ միասին՝ 928,610 հոգի։ Բանվորների թիվը կազմում է մոտ մի միլիոն։ Նրանք կուսակցության մեջ կազմում են 62,4 տոկոս։ Գյուղացիք՝ Կարմիր բանակի կոմմունիստների հետ միասին, կազմում են 323,752 հոգի՝ մոտ 21 տոկոս։ Ծառայողները՝ 220,488 հոգի, իսկ բանակի և նավատորմի կոմմունիստ ծառայողների հետ միասին՝ 234,820 հոգի կամ 15,6 տոկոս. Մնացածները՝ 1,3 տոկոս՝ 20 հազարից պակաս։ Յեթե վերցնենք բանվորների և մյուս խավերի տոկոսային հարաբերությունը, կստանանք մոտավորապես $^2/_3$ և $^1/_3$։ Իսկ յեթե վերցնենք 1921 թվականի զտման վերաբերյալ տվյալները, կըստանանք ուղղակի հակառակ հարաբերություն՝ այն ժամանակ բանվորներն անդամների մի յերրորդ մասից միքիչ ավելի եյին՝ 37,3 տոկոս, իսկ մնացածները կազմում եյին գյուղացիներ, ծառայողներ և այլք,



այսինքն այնպիսիք, վորոնց չի կարելի դասել վոչ բանվորների, վոչ գյուղացիների և վոչ էլ ծառայողների կարգը. այդպիսի կատեգորիա էլ կա։ Հետևաբար, յեթե վերցնենք կուսակցության **սոցիալական կազմը, կտեսնենք, վոր նա արմատապես փոխվել է պրոլետարական կորիզի ուժեղացման ուղղությամբ։** Կուսակցության զտումը, ի միջի այլոց, նպատակ ունի նաև էլ ավելի ուժեղացնել պրոլետարական այդ կորիզը, մի կողմից մաքրելով նրան վոչ պրոլետարական, մանր-բուրժուական և տեղ-տեղ մեր կուսակցության մեջ թափանցած նույնիսկ բուրժուական տարրերից—իսկ տեղ տեղ այդպիսիք էլ կան,—մաքրել մեզ խորթ տարրերից, իսկ մյուս կողմից՝ շնորհիվ այն հանգամանքի, վոր մենք այդպիսով կուսակցությունը կըդարձնենք ավելի միաձույլ, ավելի մարտունակ, ավելի կուռ,—մենք կգրավենք նրա մեջ պրոլետարիատի լավագույն կադրերը և դրանով իսկ կուժեղացնենք նրա պրոլետարական կազմը։ Վոր մեզանում կուսակցության մեջ թափանցել են վոչ միայն մանր-բուրժուական, այլև տեղ-տեղ նաև ուղղակի բուրժուական և հակահեղափոխական տարրեր,—այդ առանձին դեպքերում յերևան է գալիս նաև վերահսկիչ հանձնաժողովներում մեր կատարած աշխատանքի ժամանակ։ Որինակ, Սև ծովի առափնյա շրջանի կազմակերպությունն ստուգելիս Սոչիի ռայոնում յերևան է բերված մի կալվածատիրուհի, վորը կուսակցության մեջ է մտել քաղաքացիական պատերազմից հետո։ Նա կուսակցության մեջ մտնելուց առաջ ժամ է ասել տվել տերտերին, այսինքն՝ վոչ թե ժամ, այլ դրա նման մի բան (**ձայներ**՝ ժամերգություն, ժամերգություն)։

Իսկ չէ ։ կուսակցության անդամ է ընդունվել, արդեն իսկական մաղթանք է կատարել՝ կուսակցության մեջ ընդունված լինելու առթիվ։ (Հարցում՝ վո՞ր թվին է պատահել այդ)։ Մենք նրան վտարեցինք կուսակցությունից 1928 թվականին, իսկ կուսակցության մեջ նա մտել է քաղաքացիական պատերազմից հետո։ Հարկավ յես չեմ կարծում, վոր մեր պրոլետարական կուսակցության մեջ այդպիսի մարդիկ շատ լինեն, սակայն յեթե քիչ էլ լինի դրանց թիվը, այնուամենայնիվ այդ անհատները նույնպես թունավորում են մեր կուսակցությունը։ Մենք պետք է ջանանք, վոր ներկա զտումից հետո այդպիսի մարդիկ չմնան մեր կուսակցության մեջ։

Յես յերկու թիվ էլ մեջ բերեմ, վորոնք ցույց են տալիս, թե ինչպես վերջին տարիներս մեր կուսակցությունը մաքրվում էր մեր գիծը խեղաթյուրող խորթ, վոչ պրոլետարական տարրերից և ուղղակի հանցավոր մարդկանցից։ 1921 թվ. զտման ժամանակ կուսակցությունից վտարվել և դուրս է յեկել 174.900 հոգի՝ ամբողջ կազմի մոտ 30 տոկոսը։ Այդ ժամանակից մինչև 1928 թվականի հուլիսի մեկը, վերահսկիչ հանձնաժողովների կատարած առանձին ստուգումների և սիստեմատիկ աշխատանքի ընթացքում, կուսակցությունից հեռացված է 260.144 հոգի։ Այդպիսով, յեթե վերցնենք 1921 թվականի զտումը և հետագա վտարումները, ապա ընդամենը վտարվել և կամովին հեռացել է կուսակցությունից 435.075 հոգուց բաղկացած մի ամբողջ բանակ։ Վերականգնված է, համենայն դեպս, դրանց շատ փոքր տոկոսը, շատ քիչ։

Յեթե նույնիսկ նվազեցնենք այդ թիվը, նվազեցնենք մոտավորապես 10 տոկոսով, համենայն դեպս կստացվի 300 հազար հոգի՝ վորոնք այդ ժամանակամիջոցում վտարվել են մեր կուսակցությունից և դուրս են յեկել կամովին։ Այն հանգամանքը, վոր մեր կուսակցությունը ներկայումս ունի մեկ և կես միլիոն անդամ, հաստատում է, թե ինչպիսի մեծ ձգողական ուժ ունի նա՝ մանավանդ բանվոր դասակարգի համար։ Ներկայումս մեր կուսակցության մեջ կա մոտ մեկ միլիոն 928,610 բանվոր։



Այս ժամանակամիջոցում մենք կատարել ենք մի շարք առանձին ստուգումներ։ Ստուգման են յենթարկվել արտադրական բջիջները, վորոնք կազմում են մեր կուսակցության մոտ քառորդ մասը։ Ապա կատարվել է գյուղական բջիջների ստուգումը, գյուղական բջիջների մասնակի ստուգումը, իսկ վերջին տարին մենք ստուգեցինք մի շարք առանձին կազմակերպություններ, այն է՝ Սև ծովի առափնյա շրջանի կազմակերպությունը, Հյուսիսային Ոսեթիայի, Սմոլենսկի, Ղրիմի, Վոտյակների մարզի, Իրկուտսկի կազմակերպությունները, Կենտրոնական սևահողային մարզում ստուգեցինք վեց ռայոն, գլխավորապես գյուղական բջիջները, ստուգեցինք Մարիեցների մարզի կազմակերպությունը։ Այդ բոլոր ստուգումների ժամանակ կուսակցությունից վտարվել է 2130 հոգի, ընդվորում այլ և այլ շրջաններում վտարվածների տոկոսը հասնում է 7-ից մինչև 18։ Որինակ՝ Սև-ծովյան մարզում վտարվել է 13,7 տոկոս, Հյուսիսային Ոսեթիայում՝ 9,5 տոկոս, Սմոլենսկի կազմակերպության մեջ՝ 6,4 տոկոս Ղրիմում՝ 11, Վոտյակների մարզում՝ 18,3 տոկոս, Իրկուտսկի շրջանում՝ 15,3 տոկոս, Կենտրոնա-

կան սևահողային մարզում՝ 15,3% և Մարինցների մարզում՝ 6 տոկոս։ Այս թվերը ցույց են տալիս, որ միջին հաշվով կուսակցությունից վտարվել է անդամների մոտ 12—13 տոկոսը։ Վտարվածների թիվը, 1921 թըվականին վտարվածների հետ համեմատած, նվազել է մոտավորապես 2,5 անգամ։ Այդ ցույց է տալիս, որ մեր կուսակցության կազմը, այսպես թե այնպես, **լավացել է**, ամրացել է։ Սխալ կլիներ ներկայումս, հենվելով այդ թվերի վրա, համարելով դրանք 1921 թվականի զտման հետ և հիմնվելով մի շարք կազմակերպությունների ստուգումից ստացված թվերի վրա, կազմել որևէ «կոնտրոլ թվեր»։ Այնինչ տեղ-տեղ այդպես է արվում։ Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովում կան նյութեր, որոնք վկայում են, թե այժմ արդեն որոշ վայրերում հրահանգներ են տըրվում—հեռացնել կուսակցությունից այսքան հոգի։ Ցերեկ ինձ հայտնեցին մի դեպք՝ զեկուցողն ասել է, թե մեր խնդիրն է վտարել անդամների մոտ մի յերրորդ մասը։ Այդ «կոնտրոլ թվերն», ահա, շատ վտանգավոր են։ Անցյալ տարի յուրաքանչյուր կազմակերպություն աշխատում էր գերազանցել մյուսին. լենինգրադցիները վտարեցին անդամների 20 տոկոսը, մենք էլ նըրանցից յետ չենք մնա, մենք էլ կվտարենք 20 տոկոս, անկախ նրանից, թե ինչ կազմակերպություն է այդ, ինչպիսի կազմ ունի նա, հարկավո՞ր է արդյոք 20 տոկոս վտարել, թե՞ վոչ։

Մենք անհրաժեշտ ենք համարում ամենավճռական կերպով նախազգուշացնել այդպիսի «կոնտրոլ թվեր» սահմանելու դեմ, թե քանի՞ հոգի պետք է վըտարել։ **Պետք է կոմմունիստական կուսակցությունից**



**վտարել բոլոր վոչ կոմմունիստներին**։ Իսկ թե վո՞րքան կլինի դրանց թիվը՝ պետք է ստուգել ամենայն ճշտությամբ, ուշի-ուշով և դուրս չգցել այն անձանց, վորոնք կոմմունիստ են, սակայն իրենց պարտականությունները վատ են կատարում իրենց անգիտակից լինելու, պատրաստություն չունենալու պատճառով, շընորհիվ այն հանգամանքի, վոր կազմակերպությունը չգիտե ղեկավարել, չգիտե ուղղություն տալ նրանց գործունեությանը և այլն։ Այս հարցի վրա յես կանգ կառնեմ ավելի մանրամասն։

Հարկավոր է հենց սկզբից պայմանավորվել, թե **ինչու չենք գտնում մենք ներկայումս կուսակցությունը**։ Վոչ, իհարկե, այն պատճառով, վոր կան **առանձին** վատ կոմմունիստներ և բջիջներ։ Այդ դեպքում բավական կլիներ այդ առանձին վատ կոմմունիստների կամ բջիջների մասին տեղեկություններ տալ վերահսկիչ հանձնաժողովին և այնտեղ համապատասխան ձևով ստուգման յենթարկել նրանց։ Յեթե տնտեսական նոր քաղաքականության անցնելու նախօրյակին մենք ստուգում եյինք մեր շարքերն այն տեսակետից, թե կարո՞ղ են կոմմունիստներն ստանձնել վերականգնման շրջանի խնդիրները, կարո՞ղ են, անցնելով տնտեսական նոր քաղաքականության, կիրառել կուսակցության այդ քաղաքականությունը՝ մասսաների նկատմամբ, գյուղացիական մասսաների նկատմամբ,— ապա այժմ մեր առաջ կանգնած է նույնչափ մեծ, նույնչափ պատասխանատու մի խնդիր, վորը պահանջում է մեր կուսակցությունից դասակարգային վո՛չ պակաս մաքրություն, դասակարգային պրոլետարական վո՛չ պակաս տոկունություն. դա խորհրդային մեր

ամբողջ տնտեսության վերակառուցման խնդիրն ե, դա այդ տնտեսության վերափոխման խնդիրն ե։ Այս ճանապարհին, այս ետապում մենք կուսակցությունը պետք ե դարձնենք ավելի մարտունակ, ավելի միակամ, ավելի պատրաստ՝ բյուրոկրատիզմի և այլ դասակարգային խեղաթյուրումների դեմ պայքարելու համար։ Այդ խնդիրը պահանջում ե արդեն ստուգել կուսակցության բոլոր անդամներին գլխովին, ընդհանուր ստուգման յենթարկել նրա բոլոր շարքերը։ Հրահանգների մեջ մենք տալիս ենք մի ցանկ, թե ումից պետք ե զտվի մեր կուսակցությունը։ Այդ հրահանգների մեջ ասված ե.

**3. ՀամԿ(բ)Կ-ի շարքերի ընդհանուր զտման յեվ ստուգման հիմնական խնդիրն ե՝ վճռաբար մաքրել այդ շարքերը սոցիալապես խորթ, բյուրոկրատացած յեվ քայքայված տարրերից, այնպիսի տարրերից, վորոնք կառավարող կուսակցության մեջ իրենց գտնվելն ոգտագործում են իրենց շահադիտական յեվ կարյերիստական նպատակներով, մաքրել բուրժուական մեշչանական այլասերման տարրերից, կուլակության հետ միաձուլված տարրերից, վորոնք այդ պատճառով հակագործում են գյուղում կուսակցության գիծը յեվ խորհրդային որենքները կիրառելուն. վտարել արտադրությունը կազմալուծող, իրենց սեփական վարքագծով (սիստեմատիկ գործալքում յեվ հարբեցողություն արտադրության մեջ, վնասարարություն), գցում են կուսակցության հեղինակությունը բանվորների առաջ. վտարել նայեվ նրանց, վորոնք գլխավորում են բանվորների մորթապաշտ, ապադասակարգացած տարրերին, վորոնք հանդես են գալիս կուսակցության**



**վորոշումների յեվ կուսակցության հավանությունն ստացած արհմիութենական վորոշումների դեմ, այնպիսիներին, վորոնք չեն յենթարկվում դաստիարակության յեվ ուղղման. վտարել ոպպոզիցիոն խմբակների այն ներկայացուցիչներին, վորոնք դատապարտվել են կուսակցական վորոշումներով, վորոնք խոսքով միայն կտրել են իրենց կապերն այդ ոպպոզիցիոն խըմբակներից, սակայն իրոք շարունակում են իրենց հակակուսակցական աշխատանքը կուսակցության շարքերում։**

Դուք տեսնում եք, ընկերներ, վոր այս ցանկում, չնայած վոր այնտեղ թվարկված են վտարման ամենաբազմազան պատճառներ, **հիմնական առանցքը կոմմունիստի դասակարգային դեմքն ե**։ Մեզ գլխավորապես և ամենից առաջ հետաքրքրում ե, թե նա իրո՞ք բանվոր դասակարգի ներկայացուցիչն ե, վորպես բանվոր դասակարգի ավանգարդի ներկայացուցիչ, վորպես կոմմունիստ։

Նոյեմբերյան պլենումի վորոշումներն ուղղակի մատնանշում են, թե անհրաժեշտ ե մեր կուսակցության շարքերը մաքրել նաև այն մարդկանցից, վորոնք յենթարկվել են կենցաղային նեխման։ Մենք կոմմունիստների այդ յերկու խմբակները՝ դասակարգայնորեն խորթ և կենցաղային տեսակետից նեխված խմբաներին չենք հակադրում միմյանց — նրանք յերկուսն ել անպետք են վորպես կոմմունիստներ։ Մոսկվայի ակտիվին տրված զեկուցման ժամանակ միքանի ընկերներ փորձում եյին հակադրել այդ յերկու խըմբակներին. նրանց կարծիքով մենք դեն ենք կենցաղային նեխման դեմ պայքարելուն, նրանք կարծում ե-

յին, թե մենք կողմնակից ենք մատների արանքով նայելու մեր կոմմունիստների խորապես փչացած բարքերի վրա։ Ուստի մենք հարկադրված եյինք խստիվ ձևակերպել մեր վերաբերմունքն այդ փաստերին։ Այդ ակտիվի ժողովում յես ասել եյի, թե՝

**...մեր կուսակցության մեջ տեղ չպետք է ունենան չարամիտ վատնիչները, մեր կուսակցության մեջ չեն կարող տեղ ունենալ մորթապաշտները, վորոնք յեսական նկատառումներով, անձնական շահերից դրդված չեն կատարում կուսակցության դիրեկտիվները. կուսակցության մեջ տեղ չեն կարող ունենալ ազնվությունից զուրկ կարյերիստները, վորոնք ծածկվելով կուստոմսով, ոգտագործում են կուսակցությունն իրենց անձնական նպատակներով. կուսակցության մեջ չեն կարող տեղ ունենալ նրանք, վորոնք հարբեցողությամբ կորցնում են կուսակցականի իրենց դեմքը, վորոնք վարկաբեկում են կուսակցությունը. տեղ չեն կարող ունենալ նրանք, վորոնք վորպես շահագործող յեվ ստրկատեր են վերաբերվում կնոջը. կուսակցության մեջ տեղ չեն կարող ունենալ նրանք, ովքեր իրենց անձնական ոգուտները կուսակցության շահերից, հեղափոխության շահերից վեր է դասում:**

Սակայն, ընկերներ, այդ հանգամանքից՝ կենցաղային նեխման դեմ պայքարելու անհրաժեշտությունից, միքանի ընկերներ և նույնիսկ միքանի վերահսկիչ հանձնաժողովներ միանգամայն սխալ յեզրակացություն են անում, իրենց ուշադրության առանցքը դարձնելով կոմմունիստի կենցաղը և վոչ թե նրա դասակարգային դեմքը։ Այդ պատճառով մենք



մեր թեզերում ամենայն ճշտությամբ ձևակերպում ենք, վոր չպետք է մանր խծբծանքներով փորփրել յուրաքանչյուր կուսակցականի կենցաղը, անձնական կյանքը։ Մենք վո՛չ թե «մի բաժակ գինին» ենք դարձընում ստուգման անկյունաքարը, այլ կուսակցականի դասակարգային դեմքը։ Յես դիտավորյալ կերպով ընդգծում եմ գործի հենց այդ կողմը, վորովհետև մենք շատ անգամ զեկուցում ենք տվել և հանդիպել ենք դեպքերի, յերբ հարցի այդ դրույթը մեշչանաբար, ուղղակի բթամտորեն չեն հասկացել։ Հիմնվելով այն հանգամանքի վրա, վոր մենք հարցն այդպես ենք դնում, ընկերներից վոմանք յեզրակացնում են՝ ա՛, դուք, ուրեմն, հակառակ եք հարբեցողության դեմ պայքարելուն։ Ամենևին։ Մենք կողմնակից ենք վճռական պայքար մղելու հարբեցողության դեմ, սակայն մենք տարբերություն ենք դնում քաղաքական կուսակցության և ժուժկալության միության միջև, այնպիսի մարդկանց միջև, վորոնք ասում են՝ մենք անդամագրվում ենք ժուժկալների ընկերությանը և խոստում ենք տալիս ամենևին չգործածել վոգելից վորևե խմիչք։ Սակայն յեթե դուք մեր կուսակցական կանոնադրության մեջ ավելացնեք այդպիսի մի առաջարկ, ապա յես կարծում եմ, վոր նույնիսկ ընկ. Լարինը չի հավատա, թե այդպիսի խոստում տվող կոմմունիստները կկատարեն իրենց խոստումը (**ծիծաղ**)։ Այնինչ դուք ինքներդ գիտեք, թե ինչպիսի փարիսեցություն, կեղծավորություն է զարգանում այդ հողի վրա։ Միքանի որինակ բերեմ ձեզ։ Սև-ծովյան մարզում կազմակերպության քարտուղարը ընկ. Պոդգո՛րնին եր։ Յերբ նա իր պաշտոնավայրը ժամանեց, նրան ասացին՝ մեզանում կեն-

ցաղային մի արատ կա՝ հարբեցողությունը։ Ի՞նչպես սկսեց պայքարել ընկ. Պոդգորնին այդ արատի դեմ։ Նա ժողովի հրավիրեց ռայկոմի ակտիվին և այդ ժողովում, քննության առնելով հարբեցողության հարցը, վորոշեցին՝ բաց թողնել «կուլտուրաբար խմելու» լոզունգ (**ծիծաղ**)։

Ընկ. Պոդգորնին բացատրում է, թե դա մի քայլ էր դեպի առաջ, թե՝ խմեցեք մի կերպ, հավաքվեցեք վորոշ տեղում, չափն իմացեք, և այլն։ Մենք ընկերներ այդպիսի լոզունգ չենք տալիս։ Հարկավ մեզ բոլորիս համար մի իդեալ կլիներ, վոր կոմմունիստներն իսպառ չգործածեյին վոգելից խմիչքներ։ Սակայն յեթե դուք ներկայումս պատգամ տայիք, թե՝ վո՛չ մի կոմմունիստ իրավունք չունի վորևե խմիչք գործածելու, կամ պահանջեյիք, թե՝ վտարեցեք կուսակցությունից բոլոր նրանց, ովքեր գործ են ածում վոգելից խմիչքներ,— յես ձեզ հավատացնում եմ, վոր դուք կուսակցությունից դուրս կգցեյիք կոմմունիզմին նըվիրված մարդկանց, վորոնք իրենց անձնվիրությունն ապացուցել են տարիների, տասնյակ տարիների պայքարով, և կուսակցության մեջ կթողնեյիք փարիսեցիներ, վորոնք վոչ մի բանի պիտանի չեն (**ծիծաղ, աղմուկ**)։ Ընկերներ, յես դեռ չեմ խոսում այն մասին, վոր հենց այն ընկերները, վորոնց դուք ընտրում եք ստուգման համար,— իսկ ստուգիչ հանձնաժողովները դուք կազմում եք գլխավորապես հին ընկերներից— չեն կարող պատասխանատվություն ստանձնել և ասել, թե նրանք յերբեք, վոչ մի պայմանով, վոչ մի դեպքում չեն խմել, չեն խմում և չեն հարբում (**ծիծաղ**)։ Չէ՞ վոր նրանք հենց իրենք են լուծելու այդ



հարցը։ Ահա թե ինչու այդ հարցին պետք է միքիչ այլ կերպ մոտենալ։ Մեր կուսակցությունն ունի մոտ մեկևկես միլիոն անդամ. նրա մեջ կա մոտ մի միլիոն բանվոր, վորոնցից միքանի հարյուր հազարը կուսակցության մեջ մտել են Լենինի մահից հետո։ Նրանց շարքերում հարկավոր է ահագին աշխատանք կատարել, ինչպես և մեր բոլորիս միջև։ Մենք վորոշ չափով (ֆիզիկապես) անցյալի մարդիկ ենք, անցյալի բոլոր պակասություններով, մեզ բոլորիս վերաբերմամբ հարկավոր է դեռ ահագին աշխատանք կատարել։ Մենք ինքներս պետք է աշխատանք կատարենք մեզ և բոլոր այն անձանց վրա, վորոնք մեր շարքերն են մտնում։ Սակայն մարդկանց պետք է վերցնել այնպես, ինչպես վոր են, և տեսնել, թե պիտանի՞ չեն նրանք՝ հենց իրենց թերություններով և բացերով հանդերձ, պիտանի՞ յեն նրանք սոցիալիզմի համար պայքարելու, սոցիալիզմի կառուցման համար պայքարելու, իրենց զոհելու, յեթե գործը պահանջի։ Ահա թե ինչպես պետք է մոտենալ հարցին։ Ըստինքյան հասկանալի յե, վոր մեր շարքերում տեղ չեն կարող ունենալ այնպիսի մարդիկ, վորոնք մոռանում են կուսակցության շահերը։ Մենք, որինակ, շատ թույլ վերաբերվեցինք այն «սոցիալիզմ կառուցողներին», վորոնք գտնվում եյին կառուցողների միության մեջ և Մոսկվայում մի «կարուկի» սարքեցին։ Լավ եր, վոր նրանց հետո վտարեցին կուսակցությունից և դատապարտեցին. իսկ սկզբում համեմատաբար թույլ եյին վերաբերվել նրանց։ Այնինչ այդպիսի «կարուկիներ» միայն Մոսկվայում չէ, վոր գոյություն ունեն։ Ահա, ինձ մի փաստաթուղթ հանձնեցին Նուտիրլինսկի գյու-

1402-58
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան

գի (Օմսկի մարզի Տյուկալինսկի շրջանում) կուսկազմակերպության անդամների քայքայման մասին։ Այնտեղ «կարուկիից» եվ ավելի վատ մի կազմակերպություն կար, ավելի զզվելի, ավելի նողկալի մի կազմակերպություն, վորտեղ կուսակցության անունը ցեխի մեջ եր կոխկրտվում, վորտեղ կուսակցության անունը դրված եր վորևե ժամուլում անգետեղելի, նողկալի այդ ընկերության անվան կողքին։ Այդ ընկերությանը մասնակցում, նրան ղեկավարում եյին՝ Կուտիրլինսկի վարկային ընկերության նախագահ՝ ՀամԿ(բ)Կ-ի անդամ Գազովը, ապա նույն վարկային ընկերության անդամ՝ կուսակցական բջիջի քարտուղար Գրիշակովը, հաշվապահ Կարդիբայևը և ուրիշները։

Այդ անձնավորությունները մտել եյին կազմակերպության «կենտկոմի» կազմի մեջ. նրանք ունեյին իրենց կանոնադրությունը և այլն։ Ի՞նչ ե արված, սակայն, այդ մարդկանց դեմ։ Տյուկալինի ռայկոմի բյուրոն, վորտեղ քննվել ե այդ կազմակերպության հարցը, սահմանափակվեց միայն հանդիմանություն անելով կազմակերպության անդամ կուսակցականներին։ Այնինչ նրանց հարկավոր եր վտարել կուսակցությունից և անհապաղ դատի մատնել (**բացականչություն՝** ճիշտ ե)։ Ահավասիկ, այսպիսի թեթև վերաբերմունքը, վոր յերբեմն ցուցաբերվում ե քայքայման ամենանողկալի ձևերի հանդեպ, հաճախ գոյություն ե պահպանում փարիսեցիական, կեղծավոր այնպիսի վերաբերմունքի կողքին, յերբ կուսակցության անդամից պահանջում են՝ շունչ քաշիր տեսնենք՝ խմիչքի հոտ չի՞ գալիս քեզանից. կամ պահանջում են ամուսնական



արտաքին պարտադիր հավատարմություն, վոչպեսզի կոմմունիստը կուսակցության անդամ մնա — կարծես այդ սոցիալիզմի համար հաջող պայքարելու անհրաժեշտ, պարտադիր մի պայման ե։ Կոմմունիստի ամբողջ կենցաղը ռեգլամենտի յենթարկելու փորձերն այնտեղ են հասնում, վոր նախկին մի կարմիր-բանակային, կուսակցության Կենտրոնական Կոմիտեյին դիմում տալով, խնդրում ե թույլ տալ իրեն ամուսնանալ, վորովհետև տեղում վոլոստի կոմիտեն իրավունք չի տալիս նրան ամուսնանալու։ Դուք յերևի կարդացել եք այդ փաստի մասին, վորովհետև նա հիշատակված եր Մոսկվայի ակտիվին իմ տված զեկուցման մեջ։ Նախկին այդ կարմիր-բանակայինը գրում ե.

«Մոսկվա։ ՀամԿ (բ.) Կ-ի Կենտկոմ։

«Բրյանսկի գավառի Վերյալիչկի գյուղի ՀամԿ(բ) Կ-ի անդամից։ Խնդրում եմ կարգադրեք, վոր ինձ թույլ տրվի ամուսնանալ քահանայի աղջկա հետ, վորովհետև յես դեռ 1925 թվականից կապված եմ նրա հետ սիրով։ 1926 թ. յես մտա Կարմիր բանակը, անցա կուսակցության շարքերը, իսկ այժմ, յերբ տուն վերադարձա, ՀամԿ (բ) Կ-ի վոլոստային կոմիտեն իրավունք չի տալիս ինձ ամուսնանալու, իսկ յես վոչ մի կերպ չեմ կարող դավաճանել աղջկան, վորովհետև յես նրան վերադաստիարակել եմ, և նա պատրաստ ե ամեն տեսակ զիջողություններ անել ինձ, միայն թե առնեմ իրեն։ Խնդրում եմ չմերժել և բավարարել իմ խնդիրը»։

Ընկերներ, յեթե գործն այնտեղ ե հասել, վոր խեղճ տղան՝ նախկին կարմիր-բանակայինը հարկ ե համարել բողոքարկել Կենտրոնական Կոմիտեյին, ապա

չափից դուրս չե՞նք տարածում արդյոք մենք մեր փորձերը կոմմունիստների կենցաղը ռեգլամենտացիայի յենթարկելու գործում։ Յես ցույց կտամ, վոր այդ ասպարեզում մենք շատ հեռու յենք գնացել։ Չի կարելի այդքան հեռու գնալ, պետք է գործ դնել այլ մեթոդներ կուսակցության անդամներին դաստիարակելու, կուսակցականների համար առողջ կենցաղ ստեղծելու։

Մենք պետք է հարվածեյինք նաև կենցաղային նեխվածությունը. սակայն միքանի կուսակցական կազմակերպություններ այդ խնդիրն սխալ հասկացան. նրանք կարծում եյին, թե պետք է ստեղծել «կենցաղային հանձնաժողովներ», վորոնք շրջեյին կուսակցության անդամների տները և այնտեղ, տեղում քըննեյին կոմմունիստների կենցաղը։ Լենինգրադցիները գիտեն, վոր այդ բանի վրա լուրջ կերպով պնդում են բնակարանային կոոպերատիվ ընկերությունները, վորոնք կարծում են, թե իրենց պետք է մասնակից դարձնել կուսակցության զտմանը։ Ի՞նչ դուրս կգա, յեթե մենք կուսակցության զտումը կատարենք բնակարանային այն խառնակչությունների տեսակետից, վորոնք տեղի յեն ունենում բնակարանային ընկերություններում (ծիծաղ)։ Մենք ամենայն վճռականությամբ նախազգուշացնում ենք այդ բանի դեմ. դա կլինի խառնակչական մի ստուգում, վորը մեծագույն թվով ըսխալներ կառաջացնի, վոչ սկզբունքային այնպիսի վորոշումներ, վորոնք թելադրված կլինեն պրիմուսների, լվացքատների, խոհանոցների հողի վրա ծնված դըժկամակություններից։ Այնինչ վորոշ տեղերում արդեն ստեղծվել են կենցաղային հանձնաժողովներ և գործում են։ Ձեզ բաժանված իմ զեկուցման մեջ կա մի



փաստաթուղթ, վորը յես մանրամասնորեն մեջ չեմ բերի. այն է՝ Վլադիմիր քաղաքում, ոգոստոսին, դեռ զտումն սկսվելուց առաջ, ստեղծվել է կենցաղային այդպիսի հանձնաժողով. նրան տրվել է հետազոտության սխեման, վորով առաջարկվում է հետազոտել կոմմունիստների նյութական կենցաղը, նրանց բնակարանի ներքին կահավորումը, նրանց զվարճությունները, աշխարհայացքը և այլն (ծիծաղ)։

Դեռ հայտնի չէ, թե ո՛վ է լինելու այդ հետազոտիչը, ո՛վ է մտնելու այդ կենցաղային հանձնաժողովի մեջ (ծիծաղ)։ Կարող են միանգամայն անսպասելի արդյունքներ ստացվել։ Ահա, Զապորոժյեյում այդպիսի կենցաղային մի հանձնաժողով շրջել է կոմմունիստների բնակարանները։ Ի՞նչ է գտել նա։ Նա ուշադրություն է դարձրել բացառապես այն հանգամանքի վրա, վոր միքանի բանվորների խրճիթներում սրբերի պատկերներ կան։ Հարկավ, յեթե կոմմունիստի բնակարանում կախ են տված սրբերի պատկերներ, այդ վկայում է, վոր նա չի խզել իր կապերը կրոնից։ Սակայն մեզանում կոմմունիստների հետ յերբեմն ապրում են նրա ծերունի հայրը, մայրը, յեղբայրները կամ քույրերը, և մենք ամենևին խորհուրդ չենք տալիս պահանջել, վոր նա բռնի կերպով կտրի նըրանց կապը կրոնից։ Անաստվածների միությունը շարունակ մաքառում է կրոնի դեմ մղվող պայքարի այդպիսի խեղաթյուրումների դեմ։ Յեթե մենք կարծում ենք, վոր կրոնը կարելի յե վերացնել բռնի կերպով, դա սխալ է. իսկ այդպիսի սխալ հայացքից մի անգամայն սխալ յեզրակացություններ են արվում։ Սակայն, ընկերներ, դա հո Զապորոժյեյում է, ինչ-վոր հեռու, շատ հեռու մի տեղում…

Բայց ահա ձեզ Մոսկվան: 1917 թվականից կուսակցության անդամը գրում է ԿՎՀ-ին.

«Սույն թվի ապրիլի 6-ին իմ բնակարանն է գալիս անկուսակցական քաղաքացի X-ը, վորն ապրում եր ինձ հետ միևնույն տանը: Նա ինձ պատմեց, թե մարտի 15-ին թե 20-ին նրա մոտ է յեկել անծանոթ մի մարդ և մոտավորապես հետևյալն է հայտնել. «Ընկեր, ձեզ հայտնի՞ չե, վոր ներկայումս մեզանում կատարվում է կուսացության ստուգումը, և դուք այդ բանում մեզ պետք է ոգնեք. մենք խնդրում ենք բոլոր անկուսակցականներին ոգնել մեզ»: Քաղաքացի X-ի ասելով, յեկվորը, այդպիսի հայտարարություններից հետո, սկսում է հարցաքննել: Հեգնաբար հարցեր տալով, նա աշխատում է դուրս կորզել իրեն «անհրաժեշտ» պատասխանը, և յեթե դրական պատասխան է տրվում այս կամ այն կոմմունիստի մասին, հարցաքննողն սպառնալիքով նախազգուշացնում է. «Նըկատի ունեցեք, վոր մեզ ամեն ինչ հայտնի չե արդեն, և դուք ձեր ցուցմունքների համար պատասխանատու չեք լինելու»:

«Այդպիսի յեղանակով միքանի կոմմունիստների մասին հարցուփորձ անելուց հետո հերթը հասնում է ինձ, և քաղաքացի X-ին հետևյալ հարցերն են տրվել.

1) Ո՞վ է գալիս նրա մոտ: Ի՞նչպես են հագնված յեկողները:

2) Հաճա՞խ են հյուրեր գալիս: Այդ ժամանակ քեֆեր սարքո՞ւմ են:

3) Ո՞ւշ է տուն վերադառնում և հաճա՞խ է պատահում այդ:

4) Ի՞նչպես է ապրում իր ընտանիքի հետ:



5) Շահագործո՞ւմ է արդյոք իր կնոջը և մորը:

6) Ինչո՞ւ նրա բնակարանում լույսը վառ է մընում մինչև ժամի 2-ը, 3-ը: Չե՞ք կարծում արդյոք, վոր այդ ժամանակ այնտեղ քեֆ են անում խմիչքներով:

7) Աղախին ունե՞ն նրանք:

8) Արդյոք նրա կինը ամե՞ն տարի չե գնում ամառանոց և ո՞ւր:

9) Ո՞ւր եր գնացել նա ինքը անցյալ ամառ:

«Այս բոլոր հարցումների պատասխանները յեկող անձնավորությունը գրի չե առել վորպես հարցաքըննության արձանագրություն և ստորագրել է տվել հարցաքննվող քաղաքացի X-ին:

«Ինչպես հաղորդում եր ինձ քաղաքացի X-ը, յեկող անձնավորությունը (X-ը, տարաբախտաբար, չըգիտե նրա ազգանունը), ստացած չլինելով ըստ յերևույթին իրեն «հարկավոր» պատասխանները, հեռանալիս հեգնաբար հայտարարել է X-ին. «Զարմանալի չե, վոր դուք տալիս եք իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ»: Յերբ X-ը հարցրել է, թե՝ «դուք, ուրեմն, ման եք գալիս և հավաքում եք միմյն կեղտոտություն և զրպարտություն», յեկողը պատասխանել է. «Այդ դեռ կտեսնենք մենք»:

(**Բացականչություն**՝ այդ վո՞ր ռայոնում է յեղել):

Մոսկվայում (**հարցում**՝ վո՞ր ռայոնում):

Կարելի չե հայտնել այդ ընկերոջ անունը և հարցընել. նա 19.7 թվականից կուսակցության անդամ է:

Համենայն դեպս դա կատարվել է Մոսկվայում:

Ահավասիկ ձեզ մի պատկեր Նիժնիյ-Նովգորոդից:

Յես վերցնում եմ «**Իզվեստիայից**», **Լվովիչի** ֆելյետո-

նից։ Ընկ. **Ժդանովը** հաստատեց, վոր դա վերցված է «Նիժեգորոդսկայա կոմմունայից»։ Այդ թերթում զըրված է հետևյալ վերնագիրը.

«Մի գռեհկացնեք կուսակցության կոչումը»։ Իսկ վերնագրի տակ զետեղված են հետևյալ տարօրինակ յենթավերնագրերը «Ձեր մահճակալները խնձորակներ (գնդեր) ունե՞ն»։ «Իսկ քանի՞ հատ Վիեննայի աթոռ ունեք դուք»։ «Այս նկարները միանգամայն վայելո՞ւչ են»։ «Ասացեք, բժիշկ, ի՞նչ է ներկայացնում այդ կոմմունիստը»։

— Ահա, ասում է Թերթը, այսպիսի հարցեր եյին տալիս և դրանից եյին յելնում կոմմունիստների կենցաղն ուսումնասիրող միքանի հանձնաժողովներ։

Նիժնիյ-Նովգորոդի նահանգական դատարանի բջիջը, վորը հետազոտում էր կոմմունիստների կենցաղը, փորձել է վերջինս յերեք կարգի բաժանել՝ միջակից բարձր, միջակ և միջակից ցածր։

Միջակից բարձր խմբի մեջ — ասում է Թերթը — մտան այն կոմմունիստները, վորոնք ունեն՝ բազմոց, տրյումո, մահճակալ… խնձորակներով, գորգ։

Միջին խմբակի մեջ մտել են այն կոմմունիստները, վորոնք ունեն ութ հատ Վիեննայի աթոռ, սեղան, շորի պահարան և մահճակալ… առանց խնձորակների։

Միջակից ցածր խմբի մեջ մտել են այն կոմմունիստները, վորոնք Վիեննայի աթոռներ չունեն։

— Ա՜յ, այս ուրիշ բան է, այդպես էլ պետք է լինի կոմմունիստի մոտ — ասում է հետազոտողը «միջակին»՝ նրա կահավորման մասին։

Ահա մի պատասխանատու անտեսավարի «կեն-



ցաղի» ընութագրությունը, վոր տվել է Նիժկոմբինատի (Նիժնիյ-Նովգորոդում) բջիջի կենցաղային հանձնաժողովը.

«Ապրում է մի շատ փոքրիկ սենյակում՝ մոտ տասը մետր տարածությամբ։ Սենյակում կա մի գրասեղան, փափուկ բազմոց և փափուկ բազկաթոռ, յերկփեղկ շքեղ հայելի, մահճակալ։ Սենյակն ամուրիի սենյակի կերպարանք ունի, մեջը անկարգություն է տիրում։ Նկարներ կան՝ վայելուչ. առաջնորդների պատկերները չկան»։

Ապա նույն ընութագրության մեջ շարունակվում է.

«Կնոջից բաժանվել է, ապրում է քենու մոտ, նահանգական ԺՏԽ-ում աշխատում է նրա հիմնվելու օրից. կարծես կոփված մի մարդ է»։

Բայց ահա ձեզ կոոպերատիվ բջիջից մի պատկեր, վոր նկարագրում է Թերթը.

— Ինքը տանն է։

— Վոչ։

— Դուք հաճա՞խ եք հարկադրված միայնակ մնալ։

— Այո, բավականին հաճախ։

— Իսկ դուք ինքներդ, ինչ է, վո՞չ մի տեղ չե՞ք գնում։ Չէ՞ վոր դուք դայակ ունեք։ Կարող եյիք թողնել յերեխաներին և ակումբ կամ թատրոն գնալ։

Լռություն։

— Գուցե ձեր ամուսինը թույլ չի՞ տալիս։

— Վոչ, նա թողնում է, միայն թե միևնույնն է, ինքս չեմ գնում։

— Ինչո՞ւ։

— Ա՜յ, հարևաններն այնքան գնացին, վոր վերջիվերջո բաժանվեցին։

Կենցաղային հանձնաժողովի անդամի այս խոսակցությունը կոմմունիստի կնոջ հետ բավական եր միանգամայն, վոր այսպիսի յեզրակացություն արվեր.

— Դրանից յես յեզրակացրի, վոր ամուսինը խոչընդոտ է հանդիսանում... և այլն (ծիծաղ)։

Յես կարծում եմ, ընկերներ, վոր մենք այստեղ մեզ վրա յենք ծիծաղում։ Ծիծաղում ենք այն գռեհկության վրա, վորպիսին աշխատում են դարձնել քաղաքական խոշորագույն, կարևորագույն մի ակտ՝ կուսակցության զտումը։ Այդ ձևով իրոք վոչ մի լուրջ բան չենք հայտաբերի, չենք հայտաբերի դասակարգային դեմքը, այլ միայն կտեսնենք, թե նա «խնձորակներ» ունի՞ թե վոչ (ծիծաղ)։ Վոմանք հենց այդ միայն կտեսնեն՝ թե մահճակալը խնձորակներ ունի՞։

Այդ վո՞ր ժամանակից է, վոր մենք այդպես ենք գնահատում կոմմունիստներին։ Դա առաջ է գալիս նրանից, վոր կոմմունիստների մասին գոյություն ունի սխալ պատկերացում, սխալ պատկերացում կոմմունիստական կուսակցության մասին, թե նա աղքատների մի աղանդ է, վորը խոստում է տվել չխմելու, չծխելու... (ծիծաղ)։

Մենք վերահսկիչ հանձնաժողովի անդամների հետ ունեցած մեր խորհրդակցության ժամանակ յեկանք այն յեզրակացության, վոր այդպիսի «կենցաղային հանձնաժողովները» պետք է իսկույն ևեթ լուծել, նրանց աշխատանքը պետք է դադարեցնել։ Կենցաղային այդ հանձնաժողովները, իհարկե, լավագույն միտումներ ունեն, սակայն կարող են միանգամայն հակառակ արդյունքներ ստացվել, ել չենք խոսում այն մասին, վոր այստեղ կարող են մտցվել սկլոկա-



յին, միանգամայն անսկզբունք բազմաթիվ տարրեր, վոր այստեղ կարող են մտցվել խոհանոցային և այլ բոլոր բամբասանքները, և այդ ամենը կվարագուրի զտման հիմնական խնդիրները։

Թեզերի մեջ մենք ճշտիվ ձևակերպել ենք, թե ինչ պահանջներ ենք առաջադրում մենք այլևայլ կարգի բջիջներին՝ քաղաքային, արտադրական, խորհրդային, գյուղական և ԲՈւՀ-երին կից բջիջներին։ Մայիսի մինչև 10-ը մոտավորապես մենք վերջնականապես կմշակենք—այդ գործը մենք շտապ ենք կատարելու—մանրամասն հրահանգներ այլևայլ կարգի բջիջների համար։ Առանձին հրահանգներ կմշակենք ռազմական բջիջների համար, ազգային ծայրամասերի բջիջների համար, վորովհետև, ինչպես ցույց տվեց նախորդ զտումների փորձը, այդ բջիջներն ունեն իրենց առանձնահատկությունները. այնտեղ անհրաժեշտ է հատուկ ցուցումներ տալ։ Մենք աշխատեցինք նախատեսել ամեն տեսակ հարցեր, վորպեսզի սխալների առաջն առնենք։

Մենք հատուկ ուշադրություն ենք նվիրում խորհրդային և գյուղական բջիջների զտմանը։ Հարկավ, ներկայումս մեր արտադրական բջիջներում ել, բանվորի անվան տակ, կան մարդիկ, վորոնք մոտ ժամանակներս գտնվել են սպիտակների բանակում։

Սակայն, ընկերներ, այստեղ պետք է շատ բան հաշվի առնել։ Վերցնենք, որինակ, Իժևսկի գործարանները։ Իժևսկի գործարաններում, ինչպես հայտնի յե, բանվորների խոշոր մասը ժամանակին, եսեր և մենշևիկ լինելով, իսկ մի մասը վերջիններիս ազդեցությամբ, մտել եր Կապելևի դիվիզիայի մեջ, վորը

կռիվ էր մղել մեր դեմ Կոլչակի բանակում։ Յեթե այժմ դուք դիտելու լինեք Իժևսկի կազմակերպությունը, նրա մեջ դուք կգտնեք մոտ 30—40 տոկոս նախկին սպիտակ-բանակայիններ։ (**Բացականչություն՝** 75 տոկոս)։ Յես ճիշտ թիվը չգիտեմ, սակայն այդպես եյին ասում այն ընկերները, վորոնք մոտ ժամանակներս յեկել են այնտեղից։ Դուք, Իժևսկի կազմակերպության մեջ, (**հարցում՝** բանվորակա՞ն կազմի մեջ) այո, բանվորական կազմի մեջ—յես խոսում եմ արտադրական բջիջների մասին - կգտնեք 30—40 տոկոս այն մարդկանցից, վորոնք մեզ դեմ են գնացել։ Լուրջ հարց է, թե մենք պե՞տք է այժմ վտարենք նրանց կուսակցությունից։ Ինձ թվում է, վոր յեթե այդ մարդիկ չեն թաքցրել իրենց անցյալը կուսակցության շարքերը մտնելիս, յեթե բանվորները ներել են նրանց արարքը, վոր տեղի յե ունեցել անցյալում, յեթե այս տարիների ընթացքում - իսկ այդ ժամանակից անցել է 6—7 տարի—այդ բանվորները մեծ անձնվիրություն ցուցաբերեցին կուսակցության հանդեպ, ապա, ըստ իս, սխալ կլիներ այդպես լուծել հարցը (**Բացականչություն՝** հենց այդպես էլ դնում ենք մենք հարցը)։ Այդպես է գործը Ասխաբադում, Ղըզըլ-Արվադում, վորտեղ շատ բանվորներ նույնպես սպիտակ բանակում են յեղել։ Սակայն այդ չի նշանակում, թե մենք պետք է ընդհանրապես հանգիստ, անհոգ վերաբերվենք նրանց, ովքեր սպիտակ բանակում են յեղել, թեկուզ նրանք թափանցել են մեր գործարաններն ու ֆաբրիկները վորպես բանվորներ։

Յեթե վերականգնման շրջանում նրանք դեռ մի կերպ գալիս եյին մեր յետևից, ապա ներկա շրջա-



նում, յերբ պահանջվում է **արշավանք գործել** կապիտալիստական տարրերի վրա, յերբ պահանջվում է կուսակցական առավելագույն տոկունություն, մեզ համար, ընկերներ, ավելի լավ է ավելի հիմնավոր կերպով ազատվել այդ տարրերից։ Այդպիսիները բավականին շատ են մեր խորհրդային որգաններում, այսպես կոչված խորհրդային ծառայողների շարքերում։ Այդտեղ յերբեմն պատահում ենք այնպիսիներին, վորոնց ընկ. Ստալինն անվանել եր «**լաքած կոմմունիստներ**», վորոնց լաքը մի կողմից ցույց է տալիս նրանց վայելուչ կերպարանքով, իսկ մյուս կողմից լաքը, ինչպես հայտնի յե, պահպանում է մարմինը վորևէ ազդեցությունից, ներառյալ նաև կոմմունիստական ազդեցության թափանցելուց։ «Լաքած» կոմմունիստներն աշխատում են իրենց պահել այնպես, վոր վոչվոքին չվիրավորեն։ Նրանք չինովնիկներ են, վորոնք, բացի դրանից, շատ հաճախ յուրացնում են բյուրոկրատիզմի ամենավատ գծերը, վորոնք վանում են մեզանից մարդկանց, վորոնք անտարբեր կամ զոռոզաբար ու արհամարհանքով են վերաբերվում դեպի այն բանվորը, վոր գալիս է մեր հիմնարկությունը. նրանք չեն հարցնում, թե ինչու յե յեկել նրա մոտ բանվորը, վոչ մի ուշադրություն չեն դարձնում նրա վրա։ Այդ բյուրոկրատացած տարրերին պետք է ավելի ուժեղ հարվածել։

Գյուղում գոյություն ունի այսպիսի յերևույթ. անմիջականորեն գյուղատնտեսության ասպարեզում չաշխատող կոմմունիստների զգալի մասը կամ մասամբ մեր խորհրդային ստորին ապպարատում աշխատողները յերբեմն բոլորովին խեղաթյուրում են մեր

կուսակցական գիծը։ Պետք է նկատի ունենալ, վոր մեզանում գյուղի հետ կապված կոմմունիստ բանվորների թիվը այնքան էլ մեծ չէ։ Հողի հետ կապված կուսակցության անդամ բանվորները կազմում են 10,1 տոկոս. Նրանցից անձնական աշխատանքով գյուղատնտեսությանը մասնակցում են 3,7 տոկոսը, իսկ 5,8 տոկոսը նյութական օգնություն է հասցնում։ Թեկնածուների թվում արդեն հողի հետ կապված բանվորներն ավելի մեծ տոկոս են կազմում։ Այդ ցույց է տալիս, վոր այժմ մենք կուսակցության մեջ ընդունում ենք գյուղատնտեսության հետ կապված բանվորներ ավելի շատ, քան առաջ։ Թեկնածուների թվում գյուղի հետ կապված բանվորները կազմում են 16,6 տոկոս։ Ճիշտ է, այդ թիվը վերաբերում է 1927 թվականի հունվարի 10-ին և վերցված է Կենտկոմի վիճակագրական բաժնից։ Ավելի նոր տվյալներ յես չկարողացա ստանալ, Այդպես, ուրեմն, այն ժամանակ թեկնածուների 16,6 տոկոսը կապված է յեղել հողի հետ. Նրանցից 7,6 տոկոսը գյուղատնտեսությանը մասնակցելիս է յեղել իր անձնական աշխատանքով, իսկ 8 տոկոսը նյութական օգնություն է ցույց տվել։ Ահա կոմմունիստ բանվորների այն խավը, վորոնց միջոցով թափանցում է վոչ միայն այդ բանվորական խավի ազդեցությունը գյուղի վրա, այլև գյուղի ազդեցությունը բանվոր դասակարգի վրա։

Մենք պետք է ուշի-ուշով դիտենք, թե ինչ ունենք գյուղում դասակարգային իմաստով։ Միքանի շրջաններում դրությունը շատ անբարեհաջող է գյուղական բջիջների դասակարգային կազմի տեսակետից։

Յես կբերեմ միքանի տվյալներ միայն մի շրջանի



մասին. ճիշտ է, այդ վերջինը լիովին տիպիկ չէ, բայց ինձ թվում է, վոր նա առանձնապես ազդարարում է մեզ, թե անհրաժեշտ է ամենայն խնամքով և անողոքաբար զտել գյուղական բջիջները։ Վոր գյուղում կան մարդիկ, վորոնք ամենևին չեն կիրառում մեր կուսակցության գիծը, այդ վկայում են բոլոր ստուգումներն էլ առանց բացառության։ Այնտեղ դասակարգային խորթ տարրերի հետ միաձուլումն ավելի պարզ ձևով է կատարվում, այնտեղ յերբեմն բոլորովին աննկատելի փոխանցումներ, միջանկյալ խավեր կան գյուղացիության առաձին խմբակների՝ ունեորների և կուլակների, չքավորների և միջակների միջև։ Այնտեղ պատահում են այսպիսի դեպքեր. կիսաբանվոր-կիսագյուղացի վոմն, խնդրելով տերտերից կնքել իր յերեխային, գրում է. «Կոմմունիստական վողջույնով»... «Հարգելի տեր Սերգեյ, ցանկանում եմ կնքել յերեխայիս։ Կոմմունիստական վողջույններով՝ մնամ ձեր Նիկոլայ Կոզլով» (**ծիծաղ**)։ Չի՞ կարելի արդյոք «կոմմունիստական վողջույնով» դուրս գցել այդպիսիներին կուսակցության շարքերից։ Ահա, Իրկուտսկի նահանգում, Մազուրկի գյուղի բջիջն այսպես է բնութագրում Ցիկովին. «Բատրակ, նախկին ազնվականի վորդի, կարգապահ (**այդպիսի բնութագրություն բջիջն է տալիս**)։ Իդեոլոգիական տեսակետից կայուն է, կուսակցական տեսակետից բավականաչափ կայուն չէ, յեռանդագին իրականացնում է կուսակցության դիրեկտիվները»։

Յե՛կ և մի բան հասկացիր այս բնութագրությունից։ Սակայն բանն այն է, վոր միքանի բջիջներում առհասարակ չեն ուզում վատ բնութագրու-

թյուն տալ «իրենց» կոմմունիստների մասին: Միքանի բջիջներում գոյություն ունի **փոխադարձ յերաշխավորություն**: Այդ պատճառով ստուգիչ հանձնաժողովներն ընդհանրապես պետք է խիստ քննադատորեն վերաբերվեն այն բնութագրություններին, վորոնք կտան բջիջի բյուրոները և այլն: Այդ չի նշանակում, իհարկե, վոր պետք է կատարյալ անվստահությամբ վերաբերվել այդ բնութագրություններին. վոչ:

Այդ տվյալները վորպես հիմնական նյութ կծառայեն ստուգման համար. սակայն դրանց պետք է վերաբերվել վորպես **մատերիալի**, վորը կարիք ունի ստուգման: Յերբ ստուգման յենթարկեցին այդ «կարգապահ, կուսակցության դիրեկտիվները յեռանդագին կիրառող մարդուն», հանձնաժողովը վտարեց նրան վորպես «իդեոլոգիապես անկայուն մեկին, վորի հայրը յեղել է կալվածատեր-աղնվական, Մանդուրկա գյուղի խոշոր մի վաշխառու և ունեցել է խոշոր առևտուր, ջրաղաց, յերեք մեծ տուն: Կոլչակի կռիվների ժամանակ ծառայել է շտաբում վորպես սպա: Նրա յեղբայրն սպա յե յեղել, վորին նա աշխատել է մտցնել արհմիության մեջ: Վոչ մի ուշադրություն չի նվիրում կոմյերիտական բջիջին, վորը ղեկավարում եյին կուլակները: Տեսնում եք, թե ինչպես հետագայում նրա մասին տրված բնութագրությունը մեծապես տարբերվում է այն բնութագրությունից, վոր տվել եր բջիջի բյուրոն: Պետք է ի նկատի ունենալ, վոր գյուղական շատ բջիջներում (և վոչ միայն գյուղական բջիջներում) այդ բանը կրկնվելու յե. վոչ միայն գյուղական քայքայված բջիջներում, այլև չքայքայվածների մեջ գոյություն է ունենանալու փոխադարձ



յերաշխավորություն, փոխադարձաբար միմյանց տալու յեն ամենալավ բնութագրություններ: Այնինչ հանձնաժողովի կողմից բջիջն ստուգվելուց հետո ստացվում է հետևյալը. «Բոլոր կուսակցականների մեջ անխտիր հարբեցողություն է տիրում, վորը ծնում է հիվանդագին այլ յերևույթներ, մանավանդ բջիջի ղեկավարող մասում: Նրանք մասնակցում են ընկերական զվարճություններին՝ անկուսակցականների, խորթ տարրերի, կուլակների հետ միասին: Ազգակցական կապեր կուլակության հետ, կռիվներ, խուլիգանություն, կրոնական տոների կատարում, խաչով տերտերին տուն ընդունելը—և այստեղից բղխում է բարեհաճ վերաբերմունք դեպի տերտերը, վորին կուսակցականներն արիություն չեն ունեցել հեռացնել չքավորական ժողովից: Ընտանիքի անդամների թաղումը տերտերի միջոցով, մասնակցություն հարսանիքին, յերեխաների մկրտում և այլն: Ընտանեկան պժտությունները՝ այլ կանանց հետ կապ հաստատած լինելու համար, հղի կանանց ծեծելը և տնից դուրս անելը, անդամավճարները չմուծելը 4—9 ամսվա ընթացքում, կուսաշխատանքից կտրված լինելը»: (Իրկուտսկի շրջան, Գրյազնուխայի բջիջ):

«Գրյազնուխա գյուղում չքավորների ժողովը յեկան միքանի միջակներ. բջիջի քարտուղարը, ղեկավարելով չքավորների ժողովը, խնդրեց միջակներին հեռանալ ժողովից և միևնույն ժամանակ չքավորների այդ ժողովում թողեց տերտերին: Այդ վարմունքից դժգոհ մնացին միջակները. նրանք ասացին. «Մեզ հեռացնում են, իսկ տերտերին թողնում են»: Հիշատակված շրջաններից և վոչ մեկում չքավորների

ժողովին չեն հրավիրում միջակ գյուղացի ակտիվիստներին» (**ծիծաղ**)։ Տերտերին թողին, իսկ միջակներին հեռացրին չքավորական ժողովից և հետո միջակներն ասում էին. «Դուք մեզ հեռացնում եք ժողովից, իսկ տերտերին թողնում եք»։

Կենտրոնական բանվորական կոոպերացիայի բջիջից վորպես խորթ տարր վտարվածներից մեկի համար ապպարատում ծառայողներից կուսակցության ութն անգամ դրական բնութագրություն են տվել։ Այդ բանն, ընկերներ, պետք է նկատի ունենալ։

Յեվ վերջապես, այդպիսի բջիջի վերաբերմունքը չքավորության։

Գյուղական բջիջներն ստուգելիս յերևան է բերվել գյուղական կազմակերպություններում ղեկավար պաշտոններ վարող առանձին կուսակցականների այլանդակ վերաբերմունք չքավորներին։ Որինակ՝ Մալըշևի գյուղխորհրդի նախագահը չքավորներին անտեսական ոգնություն հասցնող հանձնաժողովի հարցին պատասխանեց. «**Մի չքավորին ձրի քաղեցինք, մյուսները ոգնություն չեն խնդրում**»։ (Իրկուտսկի շրջան)։ (**Ծիծաղ**)։

Նրանք գործը հենց այդպես էլ հասկացել են, յերևի, թե անհրաժեշտ է ինչ-վոր հուղարկավորության բյուրոյի նման մի բան հիմնել։

Կորոտայևի գյուղխորհրդի նախագահը, յերբ չքավորները դիմում են տվել վճարումները հետաձգելու մասին, հետևյալ մակագրությունն է արել դիմումների վրա. «Վերցնել մուշտակը», «Վերցնել վոչխարը». միևնույն ժամանակ նա վոչ մի միջոց ձեռք չի առել՝ ունևոր գյուղացիներից հետևյալ պարտքերը հավաքելու (Իրկուտսկի շրջան)։



Ընկերներ, գյուղում, ինչպես և ամենուրեք, ըստ ինքյան հասկանալի յե, վոր մենք պետք է վորոշենք, թե ինչ է ներկայացնում յուրաքանչյուր կոմմունիստ անձնապես։ Սակայն այդ չէ միայն բջիջի խնդիրը գյուղում։ Ստուգիչ հանձնաժողովները պետք է հսկայական աշխատանք կատարեն. Նրանք պետք է ստուգեն **կուսակցության աշխատանքը** և վոչ թե միայն առանձին կոմմունիստի աշխատանքը. Նրանք պետք է ստուգեն, թե **ինչպես է կիրառվում կուսակցական գիծը տվյալ գյուղում**, և միանգամայն վորոշակի պատասխան տան չքավոր ու միջակ գյուղացիներին կուսակցական գծի մասին։ Յեթե մենք հարկադրված կլինենք լուծել գյուղում շատ բջիջներ,—և ըստ յերևույթին մենք հարկադրված կլինենք այդ անելու,—ապա պետք է հնարավորություն ստեղծել նրանց տեղը այլ բջիջներ հիմնելու, դասակարգայնորեն հըստակ բջիջներ, վորոնք ընդունակ լինեն կիրառել մեր գիծը։

Յես մի փոքր կանգ կառնեմ ազգային հանրապետությունների և մարզերի բջիջների վրա։ Ձեզ բաժանված զեկուցման մեջ բերված են շատ ցայտուն փաստաթղթեր։ Այնտեղ դուք կկարդաք Ղազախստանի յերկրային կոմիտեյի զեկուցումը Իշան-Բազարի կազմակերպության մասին, վորտեղ մենք ունեցել ենք զուտ բայական (բեկական) մի բջիջ։ Բայական այդ բջիջում դեպքեր են յեղել, յերբ անկետները ծախում էին կուսակցության մեջ մտնել ցանկացող չքավորներին յերկ-յերկու կամ յերեքական ռուբլով։ Այդ անկետները դիտավորյալ կորցնում էին։ Այնտեղ կուսակցության մեջ մտնելու դիմում տալու կամ կու-

սակցական վորևէ տեղեկանք ստանալու համար հարկավոր էր դիմել վաճառականին կամ տեղական բային (բեկին)։

Դրանից էլ հեռու չի կարելի գնալ։ Պարզ է, վոր պետք է ամենալայն խնամքով ստուգել այդ և մաքրել այդ կազմակերպությունները։ Այնտեղ կան, իհարկե, բոլորովին նոր տարրեր, վորոնք կարող են գալ-մտնել մեր կուսակցության մեջ։ Յես կուզեյի կանգ առնել այստեղ մի հնարավոր սխալի վրա, վոր գործվում է հենց այդ հողի վրա. այդ այն է, վոր մենք գործ ունենք, մի կողմից՝ այնպիսի տարրերի հետ, վորոնք կուսակցության մեջ մտել են քաղաքացիական պատերազմի տարիներին, մյուս կողմից՝ այն տարրերի հետ, վորոնք կուսակցության մեջ մտել են այժմ։ Ընկերներ, յերբ մենք քաղաքացիական պատերազմի տարիներին կուսակցական կազմակերպություն էյինք ստեղծում Թյուրքմենստանում, Ղազախստանում և նման այլ մարզերում, շատ քիչ էյինք ընդունում կուսակցության մեջ պրոլետարական, դեկխանական տարրերին. նրանք դեռ չէյին մտնում կուսակցության մեջ։ Ինձ մոտ կա հիշյալ յերկրի մի ընկերոջ գրությունը, վորի մեջ ասված է, թե կուսակցության ամենահիմնական ստուգումը և զտումը պետք է կատարել ծայրերկրներում, մանավանդ Թյուրքմենստանում։ Պատճառը, ասում է ընկերը, հետևյալն է.

Թյուրքմենստանում կոմմունիստական կուսակցությունը կերտվել է արդյունաբերական պրոլետարիատի համարյա կատարյալ բացակայության պայմաններում... (ընիկ ազգաբնակությունից)։ Թյուրքմենստանի խորհրդայնացման առաջին պահուն միանգա-



մայն անկուլտուրական և համարյա գլխովին անգրագետ լինելով, Թյուրքմեն չքավորները և բատրակները կուսակցությունից դուրս մնացին։

Յեվ այդ ընկերը ներկայացնում է ինձ «զտման» 20-ից ավելի թեկնածուների մի ցուցակ։ Յերբ կարդում ես նրանց բնութագրությունը, հանգում ես այն յեզրակացության, թե այստեղ, յերևի, շատ մեծ տոկոս են կազմում այնպիսիները, վորոնք տեղ չպետք է ունենան մեր կուսակցության մեջ։ Յես կկարդամ միքանի բնութագրություն՝ առանց անունները տալու, վորովհետև տվյալները դեռ ստուգվելու յեն։

— Նախկին սպիտակ-գվարդիական սպա, վորը Կարմիր բանակի դեմ իր մարտական քաջագործությունների համար աստղի պատվանշան է ստացել բուխարական էմիրից։ Նա հրամանատար է յեղել բատալյոնի, վորը գործել է Կարմիր բանակի դեմ 1918—1919 թվականներին՝ մինչև Անդրկասպյան ֆրոնտի վերջնական լուծարքը։

— Յեղել է սպիտակ-գվարդիական բանակի 11-րդ էսկադրոնի հրամանատար՝ պորուչիկի պաշտոնով՝ Անդրկասպյան ֆրոնտը ստեղծվելուց մինչև նրա լուծարքը։ Առանձնապես աչքի յե ընկել իր դաժանությամբ. տանել չէր կարողանում գերիներին և անձամբ գնդակահարում էր նրանց։ Այս և նման «սխրագործությունների» համար արժանացել է բարձրագույն պարգևի՝ էմիրի աստղի պատվանշանին։

— Յեղել է սպիտակ բանդայի 1-ին էսկադրոնի հրամանատար։ Կարմիրների դեմ իր ցուցաբերած մարտական գործերի համար ստացել է նույնպիսի կրծքի աստղի պատվանշան։ Իր նախկին սովորությամբ հարբում և շատ հաճախ կրակում է։

—Սպիտակ բանդայի 6-րդ եսկադրոնի հրամանատար է յեղել։ Սպա, պորուչիկ։ Առանձնապես գազանություններ է գործել Թեջեն քաղաքում, վորտեղ աշխատավորները մինչև այժմ հիշում են նրա դաժան հաշվեհարդարը բայլշևիկների հետ։ Այստեղ նա անձամբ, ֆրոնտի հրամանատար Օրազ Սերդարի «բարեհաճ ներկայությամբ», գնդակահարել է ադրբեջանցի յերկու բայլշևիկ։

— Սպիտակների ժամանակ յեղել է Ասխաբադում գտնվող պահեստի բատալյոնի հրամանատարի ոգնականը՝ բացառապես բայլշևիկներին գնդակահարելու համար։ Ուներ ռոտմիստրի աստիճան։ Անդրկասպյան ֆրոնտը լուծարքի յենթարկվելուց հետո ներկվել է վառ-կարմիր բոցով և թափանցել է կուսակցության մեջ։

—Ամենահայտնի չարչիներից և խոշոր աֆերիստներից մեկն է։ Այդ բանը չգիտե թյուրքմեններից միայն նա, ով առհասարակ վոչինչ չգիտե։ Բազմիցս խաբել է պետական և կոոպերատիվ կազմակերպություններին. որինակ՝ 1923 թվականին մի շարք խաբեբայություններով կոոպերացիայի Մարզային Միությունից յուրացրել է մոտ 4000 ռուբլի կոոպերատիվի փող։ Տնտեսական հականեղափոխության համար դատապարտվել է 5 տարով՝ խիստ մեկուսացմամբ։ Ուղղիչ տնից դուրս գալուց հետո, շնորհիվ Սախաթ-Մուրադովի անմիջական հովանավորության (վորն այն ժամանակ յեղել է Թյուրքմենստանի Կոմկուսի Կենտկոմի պատասխանատու քարտուղարը), կարողացել է մտնել կուսակցության շարքերը։

Յես կարծում եմ, ընկերներ, վոր մենք տասնյակ-



ներով կգտնենք այսպիսի որինակներ։ Յես խոսել եմ այդ ասպարեզում աշխատող ընկերների հետ։ Նրանք ասում են, թե այնտեղ դրությունը շատ բարդ է այն տեսակետից, վոր այն ժամանակ սպիտակները գրավել եյին ամբողջ շրջաններ և այդ շրջաններում գտնվող բոլոր անձինք փաստորեն մոբիլիզացիայի եյին յենթարկվել բայլշևիկների դեմ կռվելու համար։ Սակայն, ընկերներ, այնուամենայնիվ մենք գիտենք, վոր այս տարիները մեզ մոտ յեկան մարդիկ, վորոնք, չնայած իրենց սոցիալական խորթ ծագման, ապացուցեցին իրենց անձնվիրությունը խորհրդային իշխանության և սոցիալիզմի համար մղվող պայքարում։

Նրանք, մեզ հետ միասին, ակտիվ մասնակցեցին քաղաքացիական պատերազմին. նրանք ակտիվ մասնակցեցին սոցիալիստական շինարարությանը. նրանցից շատերն այդ ժամանակվա ընթացքում հսկայաբար աճեցին, դաստիարակվեցին վորպես կուսակցականներ։ Ուստի յես կուզեյի այստեղ ասել, վոր այժմ չի կա**րելի հարցի լուծմանը մոտենալ միմիայն կենսագրության, անցյալի տեսակետից յեվ միմիայն սոցիալական ծագման տեսակետից**։ Այդ ասպարեզում մենք կարող ենք շատ մեծ սխալներ անել։ Նույնիսկ լավագույն կազմակերպություններում, ասում եյին ինձ ընկերները, բատրակները կազմում են միջին հաշվով ամբողջ կազմի 5—7 տոկոսը։ Պարզ է, վոր այդպիսի կազմակերպություններում պետք է ամենայն ուշադրությամբ վերաբերվել այն ընկերներին, վորոնք տարիներ շարունակ աշխատում են մեր կուսակցության մեջ։ Պետք է նրանցից դուրս գցել այն բոլոր տարրե-

րին, վորոնք խեղաթյուրում են մեր սոցիալիստական քաղաքականության կիրառումը։ Այնտեղ մենք պետք է թողնենք մեր շարքերում նրանց, ովքեր՝ չնայած իրենց սոցիալական խորթ ծագման, ապացուցել են իրենց անձնվիրությունը մեր կուսակցության։

Միևնույն ժամանակ մենք պետք է վճռաբար հարվածենք այն տարրերին, վորոնք փաստորեն պայքարում են մեր կուսակցական գծի դեմ, սոցիալ-կենցաղային ռեակցիոն սովորույթների մնացորդների ազդեցությամբ սարկացնում են կնոջը, վաճառում և գնում են կանանց, արգելում են կանանց արևելքում բաց անել դեմքը, հաճախել ժողովները, մասնակցել հասարակական կյանքին։

Այդ կողմից Միջին Ասիայի բյուրոյի կողմից 1928 թվականին ընդունված և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոյի կողմից հաստատված վորոշումը մնում է վորպես միանգամայն ճիշտ և անհրաժեշտ ցուցում ստուգիչ հանձնաժողովների համար՝ ստուգման ժամանակ։

Մենք պետք է նախազգուշացնենք դատաքննիչի մոտեցում ունենալու դեմ, յերբ յուրաքանչյուր ստուգվողին սարսուռ են ազդում, յերբ ստուգվողը գալիս է կուսակցական ստուգիչ հանձնաժողովի մոտ և նախապես տանջվում է, թե իրեն կարող են չարչարել քննչական բնույթ կրող հարցերով։ Հարկավ, յեթե մեկը գալիս է ստուգիչ հանձնաժողովի մոտ և՝ իրեն մեղավոր զգալով՝ վախենում է, դա այլ բան է։

Սակայն մեզ հայտնի յե, վոր մի շարք դեպքերում ստուգման համար ստեղծվել են այնպիսի պայմաններ, ինչպես, որինակ, Մոսկվայի ԲՈւՀ-երին կից



բջիջներում. այնտեղ վոմանք քննում եյին ստուգիչ հանձնաժողովի մոտ յեկողների և այնտեղից դուրս յեկողների զարկերակը (պուլսը), և դուրս եր գալիս, վոր բոլորի զարկերակն ել արագ է խփում։ Ուղղակի բաղանիք եյին սարքում։ Մեզ այդ բոլորովին պետք չե։ Մենք քննության (եկզամենի) դեմ ենք, վորովհետև պետք է բացեիբաց խոստովանել՝ ստուգողներն իրենք յերբեմն լավ պրոլետար-կուսակցական լինելով՝ այնքան ել պատրաստություն չունեն, այնքան ել լավ թեորետիկներ չեն։

Նրանք յերբեմն խելահեղ, գլխահան հարցեր են տալիս։ Որինակ՝ նախորդ ստուգումներից մեկի ժամանակ այսպիսի մի հարց է տրվել. «Ի՞նչ ընդհանուր բան կա կուսակցության աճման և ծովի մակերևույթի միջև»։ Յեվ հարցը տվողներն ստուգվողի վրա նայում են հաղթական։ Ստուգվողը շշկլվում է, չի իմանում ինչ պատասխանի։ Այն ժամանակ նրան ասում են. «Ծովում տեղի յե ունենում մակընթացություն և տեղատվություն, կուսակցության աճման մեջ ել տեղի յե ունենում մակընթացություն և տեղատվություն»։ Կամ այսպիսի հարց են տալիս. «Նախ և առաջ ի՞նչն է գոյացել, վոգի՞ն թե մատերիան»։ Նախ՝ այդ հարցը չի վկայում, թե հարցնողը վորևե ճշգրիտ մոնիստական աշխարհայացք ունի։ Ստուգվողը մտածում-մտածում և պատասխանում է. «Հավանորեն մատերիան, մենք ես մատերիալիստներ ենք»։

Ինչների՞ս է պետք այդ։ Այդ մեզ բոլորովին պետք չի։ Ըստինքյան հասկանալի յե, վոր յերբ մենք գործ ունենք այլ կուսակցություններից դուրս յեկած անձնավորությունների հետ, յերբ մենք գործ

ունենք ինտելլիգենցիայի շարքերից դուրս յեկած անձանց հետ, վորոնք համեմատաբար վերջերս են յեկել մեզ մոտ, վորոնց նկատմամբ մենք հիմնավորապես կասկածում ենք, թե հստակ կոմմունիստներ են նրանք, թե վոչ, այդ դեպքում ավելորդ չի լինի ստուգել, թե հետաքրքրվում են նրանք կուսակցության վորոշումներով, հետաքրքրվում են մեր կուսակցության պատմությամբ, թե՞ նրանք ավելի հետաքրքըրվում են, օրինակ, Բունդի պատմությամբ, եսերների կուսակցության պատմությամբ և դրանք ավելի լավ գիտեն, քան մեր կուսակցության պատմությունը։ Այդպիսիներին չի խանգարի, իհարկե, ստուգել ավելի հիմնական ձևով նաև այդ կողմից։ Սակայն յեթե դուք քննության յենթարկելու լինեք բանվորներին կամ գյուղացի կոմմունիստներին, վորոնց նկատմամբ մենք համարյա վոչինչ չենք արել կամ, համենայն դեպս, շատ քիչ բան ենք արել՝ նրանց դաստիարակելու, քաղաքական գրագիտության մակարդակը բավարար չափով բարձրացնելու համար, իսկ այժմ այդ հիման վրա կվտարեք նրանց վորպես կուսակցական հարցերի մասին քիչ հասկացողություն ունեցող անձանց, — ապա դա սխալ ե։

Պետք ե նաև գոհեկացնել այս զտումը, հրավիրելով մեզ համար խորթ տարրերին՝ կարծիք հայտնելու կոմմունիստների մասին։ Դրա հետ կապված ե հրապարակային կամ դռնփակ զտման հարցը։ Մեր ունեցած խորհրդակցության ժամանակ կասկածներ եյին հայտնվում, թե հնարավոր ե արդյոք Լենինգրադի և այլ քաղաքների գործարանների և ֆաբրիկաների արտադրական մեծ կոլլեկտիվների համար դռնբաց



զտում կատարել։ Միքանի ընկերներ կարծում են, թե մենք անպայման բոլոր կուսակցականներին միաժամանակ պետք ե հավաքենք մի տեղ։ Յեթե այդ չի կարելի անել, ապա ինչու չի կարելի ժողովներ գումարել ըստ ցեխերի, ըստ ցեխային բջիջների, ըստ հերթափոխությունների։ Ինչու, վերջապես, չի կարելի ստուգումներ կատարել այբուբենական կարգով, հայտարարել, թե այս-ինչ օրը տեղի յե ունենալու ստուգիչ հանձնաժողովը, վոր դռնբաց ժողով ե լինելու այս-ինչ ժամին, այս-ինչ օրը։ Կարելի յե նախորոք տեղեկացնել դրա մասին բոլոր բանվորներին, մատնանշելով, թե ով կարող ե ներկա գտնվել։ Պետք ե վորքան կարելի յե քիչ կապել այդ գործը ձևականություններով։ Իսկ վերջն արդեն պետք ե գումարել այնպիսի ժողով, վորին կարողանան ներկա գտնվել բոլորը։ Այնինչ մենք վախենում ենք, վոր յեթե հայտարարենք, թե ստուգիչ հանձնաժողովի նիստը դռնբաց ե լինելու այս-ինչ ժամանակ, և նշանակված ժամին վոչվոք չկարողանա գալ, կամ նիստը նշանակվի մի այնպիսի տեղ, վորտեղ չի կարող բավականաչափ մարդ հավաքվել,—ապա ընդհանուր ժողով չի լինի ամենևին։ Մենք կարծում ենք—և այդպես ե վորոշել Կենտկոմի նոյեմբերյան պլենումը,—վոր կուսակցության հրապարակային զտումը մեծ նշանակություն ունի մեզ համար, բանվորների համար, գյուղի բատրակ, չքավոր և միջակ տարրերի համար։ Հարկավ այդտեղ մեծ դժվարություններ կլինեն։ Զտումն ավելի դանդաղ կընթանա։ Բայց մենք, այնուամենայնիվ, կարծում ենք, վոր մինչև 16-րդ համագումարը զտման ամբողջ աշխատանքը կատարված կլինի։ Մենք դեմ

ենք հապճեպ աշխատանքի, գործը շտապ վերջացնելու։ Այդ ևս վատ է։

Մենք պետք է վերացնենք ընդհանրապես կուսակցության դեմ ուղղված դեմագոգիկ ելույթների եյական վտանգը հրապարակային ժողովներում, պետք է վերացնենք այն վտանգը, թե միքանի ընկերներ կենթարկվեն խվոստիստական այն տրամադրություններին, վորոնք գոյություն կունենան տեղ-տեղ, հրապարակային, փաստորեն անկուսակցական, ժողովներում։ Այնուհանդերձ, կուսակցության հրապարակային զտումը բանվորների, գյուղացիների ներկայությամբ՝ միակ ուղիղ միջոցն է։

Ըստինքյան հասկանալի յե, վոր այդ ժողովներին չպետք է թողնել խորթ տարրերին։ Հարկավոր է նախորոք հայտարարել, վոր այդ ժողովներին չեն կարող ներկա գտնվել քաղաքում և գյուղում ընտրական իրավունքներից զրկված անձինք և առհասարակ մեզ խորթ տարրերը (**բացականչություն.** իսկ միության վոչ անդամները կարո՞ղ են ներկա գտնվել)։ Իհարկե, գործարանային ժողովներում, խորհրդային ծառայողների ժողովներում միության վոչ անդամները չեն կարող ներկա գտնվել։ Այդ ճիշտ է (**բացականչություն.** ո՞վ է մասնակցում քվեարկության)։

Քվեարկության մասին։ Խորհրդակցության ժամանակ մենք վորոշեցինք, վոր քվեարկությանը մասնակցում են միայն ստուգիչ հանձնաժողովի անդամները (**բացականչություն.** ճիշտ է)։

Վորոշումը կայացնում է ստուգիչ հանձնաժողովը։ Նրանք կարծում են, թե զտման ընթացքում կուսակցական կազմակերպությունը, կարծես, լուծված



է համարվում։ Ստուգման շրջանում կուսակցության կոնտրոլը և ղեկավարությունը վո՛չ մի դեպքում չը պետք է թուլանա։

(**Բացականչություն.** իսկ կարծիք հարցնել կարելի՞ յե)։ Իհարկե, կարելի յե և պետք է ժողովի կարծիքը հարցնել այս կամ այն ընկերոջ մասին։ Բայց յեթե մենք այդ կարծիքը քվեարկության յենթարկենք, ապա կստացվի այն, ինչ վոր այժմ գոյություն ունի, այն է՝ այնպիսի փաստեր, յերբ պատահաբար սարքված տեղեժողովում, դեռ նախքան ընկերոջ վերաբերյալ տեղեկությունների ստուգելը, վորոշում է կայացվում, թե հարկավոր է նրան վտարել։ Յեվ այն ընկերները, վորոնց մասին այդպիսի վորոշում է կայացվում, դիմում են ժողովին ներկա գտնվող անկուսակցականներին և աղաչում են՝ թողե՛ք մեզ կուսակցության մեջ, մենք ձեզ կապացուցենք, վոր անձնվեր մարդիկ ենք, և այլն։ Այդ գործը պետք է այլ կերպ կատարել (**Բացականչություն.** ճիշտ է)։

Մենք մանրամասն քննել ենք այդ հարցը, և հրահանգների մեջ այդ բոլորը մանրամասնորեն մատնանշված է։ Մենք կարծում ենք, վոր ավելի լավ կլինի, յեթե մենք հնարավորություն տանք ներկա գտնվողներին ազատ արտահայտվել, թե ինչ առարկումներ ունեն նրանք այս կամ այն կոմմունիստի մասին և ապա ասենք. «Ընկերներ, ձեր առարկումները և կարծիքները մենք ինկատի կառնենք հարցը լուծելիս» (**բացականչություններ.** ճիշտ է)։ Այդ կանենք առանց վորևէ քվեարկության. այդ ավելի լավ է, քան կաշկանդել իր վորոշումը նախորոք տեղի ունեցած քվեարկությամբ։ Ապա թե վոչ՝ արի ու բացատրիր, թե ին-

չու մենք, ստուգիչ հանձնաժողովի անդամներս, այլ
կերպ վորոշեցինք, և վո՛չ այնպես, ինչպես քվեարկել
եյինք նախապես՝ ընդհանուր ժողովում։

Դառնանք որացուցային ժամկետներին։ Խոր-
հրդակցության ժամանակ մենք նախագծեցինք, վո՛ր
ստուգումն սկսվելու յե մայիսի 15-ին. իսկ թե վո՛ր
բջիջները վո՛րտեղ և ինչպես պետք է զտել, առաջ
գյուղական թե ԲՈւՀ-երի բջիջները, ռազմակա՛ն թե
արտադրական բջիջները զտել,—այդ յուրաքանչյուր
տվյալ շրջանում պետք է վորոշվի առանձին։ Վորով-
հետև ցանքը, որինակ, զանազան ժամանակ է սկսվում,
մի տեղ ցանքը վերջացել է արդեն, և կարելի յե ստու-
գել գյուղական բջիջը, մի այլ տեղ ցանքը դեռ նոր է
սկսվել։ Այնպես վոր մենք **ընդհանուր** ցուցումներ
միայն կտանք, իսկ կոնկրետ պլանը կմշակի ամեն մի
կազմակերպություն։

Յես կշոշափեմ այն հարցը, թե հարկավո՞ր է կըր-
կին ստուգել վերջերս ստուգված կազմակերպություն-
ները, այն է՝ Սև ծովի շրջանի, Հյուսիսային Ոսե-
թիայի, Ղրիմի և այլ կազմակերպությունները։ Այդ
հարցի շուրջը մենք հատուկ վորոշում կկայացնենք և
կհամաձայնեցնենք Կենտկոմի հետ։

Մենք կարծում ենք, վոր հենց նոր ստուգված մի-
քանի կազմակերպություններ, որինակ՝ Ղրիմը, կարիք
չկա ստուգելու։ Իսկ ինչ վերաբերում է սև-ծովյան կազ-
մակերպության, նա ստուգվել էր, բայց այժմ դուրս է
գալիս, վոր այնտեղ կուսակցության անդամների թիվը
բոլորովին չի համապատասխանում ստուգվածների
թվին. նշանակում է, այնտեղ բոլոր անդամները չեն
ստուգվել. ուստի անպայման պետք է նորից ստուգել։



Մենք կուզեյինք առանձնապես ձեր ուշադրու-
թյունը հրավիրել այն հանգամանքի վրա, վոր այժմ
արդեն այլևայլ թյուրիմացություններ են ծագում ող-
պորտունիզմի զանազան խմբակների հարցի շուրջը։ Ինձ
պատմեցին զանազան խմբակների հարցի շուրջը։ Ինձ
հայտնեցին, վոր ֆինժողկոմատի բջիջում մի ընկեր
իր զեկուցման ժամանակ ասել է՝ զտման ժամանակ
գլխավոր ուշադրությունը պետք է դարձնել աջ վը-
տանգի վր ...։ Հենց այդպես էլ ասել է։ Այնինչ մենք
ունենք կուսակցության վորոշումը, թե աջ վտանգի
դեմ **իդեոլոգիական պայքար ենք** մղում։ Այդ վորո-
շումը վո՛չ միայն պահպանում է իր ուժը, այլև նորերս
կայացած պլենումի վորոշումը մեզ պարտավորեցնում
է առանձնապես ուժեղ պայքար մղել այդ ուղղու-
թյամբ։ Ըստինքյան հասկանալի յե, վոր նրանք,
ովքեր ուղղակի խախտում են կուսակցության վորո-
շումները, նրանք, ովքեր փորձեր են անում այժմ՝
կուսակցության վորոշումներից հետո, վիժեցնել մեր
վորոշումները ինդուստրիացման մասին, գյուղատնտե-
սության կոլլեկտիվացման, կուլակի դեմ պայքարելու
մասին, նրանք, ովքեր կհակագործեն կուլակի անհա-
տական հարկադրման, նրանք, ովքեր կպաշտպանեն
կուլակային տարրերին,—չեն կարող, հարկավ, տեղ
ունենալ կուսակցության մեջ։ Սակայն միանգամայն
սխալ կլիներ, յեթե մենք այդ հիման վրա սկսեյինք
կուսակցությունից վտարել նրանց, ովքեր կարտա-
հայտվեյին այն հարցերի շուրջը, վորոնց մասին մենք
խոսում եյինք այդ պլենումում, վորոնք դրված են
մեր աշխատանքի որակարգում։ Այդ միանգամայն
սխալ կլիներ։

Պետք է առանձնապես ուշադրություն նվիրել

ստուգիչ հանձնաժողովների պատրաստմանը, նրանց ամենայն խնամքով կազմելուն, ուշի-ուշով հրահանգմանը և այն հանգամանքին, վոր ստուգիչ հանձնաժողովներն աշխատեն լիակատար վստահության պայմաններում։ Յեթե նրանք վորևե սխալ գործեն, պետք ե արագորեն, աշխատանքի ընթացքում, ուղղել այդ սխալը, այլապես վորևե մի հանձնաժողով կվարկաբեկի իրեն այս կամ այն սխալի պատճառով, և այդ պարագան կանդրադառնա բոլոր ստուգիչ հանձնաժողովների աշխատանքներին ցույց տրվող վերաբերմունքի վրա։ Հարկավոր ե մշտապես ուշադիր ղեկավարություն այդ ստուգիչ հանձնաժողովների աշխատանքներին, շարունակ հաշվի առնել այդ ստուգիչ հանձնաժողովների փորձը, ստուգման ընթացքի մասին լայնորեն իրազեկ դարձնել հասարակական կարծիքին։

Պետք ե ինկատի ունենալ, վոր մեզ համար վոչ միայն կարևոր ե վորոշել այս կամ այն առանձին կոմմունիստի պիտանիությունը, այլ ընդհանուր յեզրակացություններ անել այս կամ այն կուսբջիջի, այս կամ այն կուսակցական կազմակերպության աշխատանքի մասին, ընդհանուր յեզրակացություններ, վորոնք հնարավորություն կտան մեզ բարելավել աշխատանքը։ Այդ գործում հսկայական դժվարությունների կհանդիպենք։ Մեկուկես միլիոն հոգուց բաղկացած կուսակցության ստուգման ահագին աշխատանքը ուժ և միջոցներ ե պահանջում մեզանից։ Այժմ մենք ժամանակավոր վորոշ մինուս կունենանք, յերբ յուրաքանչյուր կազմակերպության ուժերը մեկուկես-յերկու ամսով կզբաղեցնենք այդ ստուգմամբ։ Այդ անվիճելի յե։ Պետք ե հիշել մեր ստանձնած խնդրի պա-



տասխանատվությունը, պետք ե ուշադիր վերաբերմունք ապահովել դեպի ստուգվողները, պետք ե ապահովել դասակարգային գծի անաղարտությունը ստուգման ժամանակ—այդ ե գլխավորը։

Նախորոք վոչ մի կոնտրոլ թիվ չպետք ե նշանակվի։ Պետք ե առավելագույն չափով օգտագործել կուսակցականների կամավոր աշխատանքն այդ զտման ժամանակ, մոբիլիզացիայի յենթարկել կուսակցականներին այդ աշխատանքի համար։ Այդ զտման համար բավական նյութական միջոցներ կպահանջվեն, և մենք պետք ե կատարենք այդ զտումը այս կամ այն միջոցների նվազագույն մսխումով, առավելագույն չափով ներգրավելով այդ գործին կամավոր աշխատանքը։

Ապա մենք պետք ե հոգ տանենք, վոր զտման ժամանակ իսկ կուսակցության շարքերը մտնեն բանվորների նոր կադրեր։ Հաշվի առնելով ընդունելությունների նախորդ կամպանիաները, մենք չպետք ե աչքաթող անենք, վոր այս անգամ դա չպետք ե լինի ընդունելության այդպիսի մի հարվածային «կամպանիա»։ Մենք պետք ե ուշադիր վերաբերմունք ցույց տանք ստուգման ժամանակ կամ նրանից հետո մեզ մոտ յեկողին, վորպեսզի նորից չաղտոտվի մեր կուսակցությունը, այլապես ստուգման աշխատանքը զուր կանցնի։

Կուսակցությունը խորթ, անպետք տարրերին դուրս գցելով՝ այդ գործողությամբ պետք ե դառնա էլ ավելի ուժեղ, էլ ավելի մարտունակ։ Նա պետք ե իր բոլոր ուժերը մոբիլիզացիայի յենթարկի և յենթարկում ե՝ պայքարելու մեր կուսակցության այն վո-

րոշումների կիրառման համար, վորոնց նպատակն է կատարելապես վերակառուցել, սոցիալիստական վերակառուցման յենթարկել մեր տնտեսությունը։

Յես վստահ եմ, ընկերներ, վոր վորքան էլ դըժվարին լինի այս խնդիրը, նրա կարևորությունը գիտակցող կուսակցությունը կկատարի այն այնպես, ինչպես պահանջում են սոցիալիզմի համար մղվող պայքարի շահերը (**Ծափահարություններ**)։

---

## ՀԱՄԿ (Բ)Կ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԶՏՄԱՆ ՅԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԶՏՄԱՆ ՅԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

**Բանաձեվ ընկ. Յարոսլավսկու զեկուցման առթիվ**

(Ընդունված է միաձայն)

1. Համ. Կ. (բ) Կ. իր գոյության ամբողջ ընթացքում միայն մի անգամ է անցկացրել ընդհանուր զտում 1921 թվին, ժողովրդական տնտեսության վերականգնման սկզբին, քաղաքացիական պատերազմի վերջանալուց, յերբ կուսակցությունն իր առաջ խընդիր դնելով «զտել կուսակցությունը վոչ կոմմունիստական տարրերից, ճիշտ կերպով հաշվի առնելով Համ. Կ. (բ) Կ. յուրաքանչյուր անդամին իր կատարած աշխատանքով թե ըստ պաշտոնի, ինչպես նաև վորպես Համ. Կ. (բ) Կ. անդամի», զգալի կերպով ազատվել է իրեն խորթ, քայքայված տարրերից, ամրապնդել է կուսակցության շարքերը և ձեռք է առել մի շարք միջոցներ, վորոնք սահմանափակել են վոչ պրոլետարական տարրերի ընդունելությունը կուսակցության մեջ և ապահովել բանվոր դասակարգի և գյուղացիության շարքերից կուսակցության մեջ մըտնողների ավելի մանրակրկիտ ընտրությունը։

2. Այդ զտման ժամանակից արդեն անցել է 8 տարի, վորոնց ընթացքում կուսակցությունը թվականորեն ավելացել է յերեք անգամ։ Այդ շրջանում 13-րդ

և 14-րդ կուսակցական համագումարների մեջ անց է կացվել կուսակցության վոչ արտադրական բջիջների անդամների ստուգում, վորի խնդիրը կայանում եր նախ և առաջ «կուսակցությունը նրան սոցիալապես խորթ, քայքայված տարրերից մաքրելու, ինչպես նաև կուսակցությունը վոչ պրոլետարական կազմի այն տարրերից մաքրելու մեջ, վորոնք կուսակցության մեջ յեղած ժամանակաշրջանում չեն հայտնաբերել իրենց վորպես կոմմունիստներ այս կամ այն պետական տնտեսական և այլ կազմակերպությունների աշխատանքի բարելավման գործում և անմիջական կապ չեն ունեցել բանվորական և գյուղացիական մասսաների հետ» (13-րդ համագումարի բանաձևը)։ Ընդամենը ստուգվեց կուսակցության ամբողջ կազմի մոտ 25 տոկոսը, ըստվորում հեռացվեց ստուգվածների մոտ 6 տոկոսը։ 1926 թվին անցկացվեց գյուղական բջիջների մասնակի ստուգումն, իսկ 27 թվին՝ կուսակցության անդամների և թեկնածուների համամիութենական վերացուցակագրություն։ Այդպես է Համ. Կ.(բ) Կ. իրագործել Կոմինտերնի պատկանելու պայմաններից մեկը (կետ 13), վորը պահանջում է.—

«Բոլոր յերկրների կոմմունիստական կուսակցությունները, վորտեղ կոմմունիստներն իրենց աշխատանքը կատարում են լեգալ կերպով, պետք է կատարեն կուսակցական կազմակերպությունների անձնական կազմի պարբերական զտումներ (վերացուցակագրություններ), սիստեմատիկ կերպով զտելու համար կուսակցությունն անխուսափելիորեն նրա մեջ խցկվող մանր-բուրժուական տարրերից»։



Բացի դրանից վերականգնման շրջանում կուսակցությունը սիստեմատիկ կերպով, որից-որ ստուգել է իր շարքերը վերահսկիչ հանձնաժողովների գործունեյության միջոցով, կուսակցության այն անդամներին, վորոնք խախտում են ծրագիրը կամ կուսակցական դիսցիպլինան, քայքայված տարրերին, անհարազատների պատասխանատվության յենթարկելու ճանապարհով, ըստվորում 1922 թվից մինչև 1928 հուլիսի մեկը վերահսկիչ հանձնաժողովների կողմից հեռացվել, կուսակցությունից կամավոր կերպով հեռացել և վերացուցակագրության չեն յենթարկվել Համ. Կ.(բ)Կ. 260.144 անդամներ և թեկնածուներ։

3. Յերկրի տնտեսության սոցիալիստական վերակառուցման շրջանում, կապված քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերի դեմ տարվող սոցիալիստական գրոհի և դասակարգային պայքարի սրման հետ, կուսակցությունը պետք է առանձնապես մանրակրկիտ կերպով վերանայի իր շարքերը նրա համար, վորպեսզի ուժեղացնի ընդդիմադրությունը մանր-բուրժուական տարրերքի ազդեցությանը, կուսակցությունը դարձնի ավելի միատարր, ավելի մարտունակ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման դժվարությունները հաղթահարելու գործում։

1928 թվի նոյեմբերյան պլենումի վորոշումը՝ «կուսակցությունը սոցիալապես խորթ, նրա մեջ խըցկըված, բյուրոկրատացած և քայքայված տարրերից ամենավճռական կերպով զտելու», «տիրող կուսակցության մեջ լինելն իրենց կարյերիստական նպատակների համար օգտագործող բուրժուական, մեշչանական

վերասերման չենթարկվող տարրերից, կուլակության
հետ միացողներից և այլն,—զտելու վերաբերյալ՝ ի նը-
կատի ունի նաև Կոմինտերնի կողմից ընդունված պա-
հանջը Համկ(բ)Կ բոլոր անդամների և թեկնածուների
պարբերական զտման (վերացուցակագրության) վե-
րաբերյալ, վորը նպատակ ունի բարելավել սոցիալա-
կան կազմը, բարձրացնել տեղերում և կուսակցության
մեջ, իր ամբողջությամբ վերցրած, կուսակցական կազ-
մակերպությունների քաղաքական և բարոյական մա-
կարդակը սոցիալիզմի համար մղվող պայքարի ամենա-
դժվարին էտապում, ԽՍՀՄ ամբողջ ժողովրդական
տնտեսության արմատական, սոցիալիստական վերա-
կառուցման շրջանի սկզբին։

4. Համկ(բ)Կ սոցիալական կազմի անվիճելի բա-
րելավման հետ միասին և նրա պրոլետարական կորի-
զի ամրապնդման հետ միաժամանակ (44 տոկոս Լե-
նինի մահվան ժամանակ և 62 տոկոս 1928 թվի հու-
լիսի մեկին), յերբ բանվորների թիվը կուսակցու-
թյան մեջ այդ ժամանակվա ընթացքում աճել է ավե-
լի քան յերեք անգամ, ինչպես նաև զգալի կերպով ա-
ճել է բանվորական բջիջների թիվը և տեսակարար
կշիռը, կուսակցության սոցիալական կազմը դեռևս
յետ է մնում այն պահանջներից, վորոնք դնում են
կուսակցության առաջ ԽՍՀՄ ժողովրդական տնտե-
սության սոցիալիստական վերակառուցման խնդիր-
ները։ Ընդսմին պետական, տնտեսական, պրոֆմիու-
թենական և մինչև անգամ կուսակցական ապպա-
րատների բոլոր օղակներում բյուրոկրատական տար-
րերի, իսկ տեղ-տեղ, մանավանդ գյուղական ստորին
ապպարատում, բուրժուական, մեշչանական վերասեր-



ման չենթարկված, կուլակության հետ միացած, կու-
սակցության դասակարգային գիծն աղավաղող տար-
րերի գոյությունը դանդաղեցնում է քաղաքում և
գյուղում լավագույն պրոլետարական տարրերի ընդ-
գրկումը կուսակցության մեջ, թուլացնում է սոցիա-
լիստական շինարարության թափը, յերբեմն բանվոր-
ների և գյուղացիների լայն մասսաների մեջ անվըս-
տահություն է սերմանում կուսակցության և խորհըր-
դային իշխանության ձեռնարկումների նկատմամբ։
Հարյուր հազարավոր պրոլետարների հետ միասին,
վորոնք կազմում են լենինյան կուսակցության ամուր
հիմքը, կուսակցության մեջ են թափանցել մանր-
բուրժուական տարրեր, կենցաղային նեխման կրողներ,
վորոնք իրենց անձնական և հասարակական կյանքի
որինակով քայքայում են մտցնում կուսակցության
շարքերում, արհամարհում են բանվորների և աշխա-
տավոր գյուղացիների հասարակական կարծիքը, մոր-
թեպաշտ, կարյերիստական տարրեր, վորոնցից կու-
սակցությունը վերահսկիչ հանձնաժողովների սիստե-
մատիկ առույգ աշխատանքով բավականաչափ չի
մաքրվում։

Կուսակցության նախաձեռնվող զտումը պետք է
մաքրի Համկոմկուսի շարքերն այդ տարրերից և դրա-
նով իսկ ուժեղացնի նրա մոբիլիզացիոն պատրաստա-
կանությունը սոցիալիստական առաջխաղացման գոր-
ծում, ավելի ամրապնդի վստահությունը դեպի կու-
սակցությունը և նրա հեղինակությունը, նրա կողմը
գրավի քաղաքի և գյուղի նոր պրոլետարական և
բատրակային խավեր։

**5. Կուսակցության ընդհանուր զտման հարցը**

դնելով, անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր բանվոր դասակարգի կազմը վերջին տարիների ընթացքում զգալի կերպով փոխվել է, վորի մասին Լենինն անհրաժեշտ եր համարում նախազգուշացնել 1921 թվի զտումից կարճ ժամանակ հետո, յերբ նա գրում եր.

«Կասկած չկա, վոր մեզ մոտ մշտապես բանվոր են համարվում այնպիսի մարդիկ, վորոնք խոշոր արդյունաբերության իմաստով ամենափոքր լուրջ դպրոց իսկ չեն անցել։ Ամեն տեղ բանվորների կատեգորիայի մեջ են ընկնում ամենաիսկական մանր բուրժուաներ, վորոնք պատահաբար և ամենակարճ ժամանակում դարձել են բանվորներ։ Բոլոր խելոք սպիտակ-գվարդիականները լիակատար վորոշակիությամբ հաշվի յեն առնում այն հանգամանքը, վոր իբր թե մեր կուսակցության պրոլետարական բնույթն, իսկապես ասած, բոլորովին ել չի ապահովում նրան մանր-տնտեսական տարրերի հնարավոր գերակշռությունից և այն ել ամենակարճ ժամանակամիջոցի ընթացքում»։

Լենինն անհրաժեշտ է համարում նաև նախազգուշացնել, վոր «չափազանց շատ ինտելլիգենտական և կիսաինտելլիգենտական տարրերի համար մեր պայմաններում բանվոր դառնալը վոչ մի դժվարություն չի ներկայացնում»։

Նա պնդում եր «բանվոր» հասկացողությունը սահմանել այնպես, վոր այս հասկացողության տակ հարմարվեն միայն նրանք, ով վոր տնտեսական դրությամբ իսկապես պետք է յուրացներ պրոլետարական հոգեբանությունը, իսկ այդ անհնարին է առանց կողմ-



նակի նպատա՛կներ չունենալով, այլ տնտեսական և սոցիալական կենցաղի ընդհանուր պայմանների հետևանքով, յերկար տարիներ գործարանում լինելու» (Լենին, 1922 թ.)։

Կուսակցության ամենաառողջ մասը համարելով նրա գործարանային բջիջները, կուսակցությունը պետք է, սակայն, ստուգի վոչ միայն վոչ արտադրական բջիջները կամ գյուղական բջիջները։ Անհրաժեշտ է հաշվի առնել, վոր կուսակցական գործարանային բջիջները ևս թափանցում են,—թեև շատ ավելի փոքր չափով, քան այլ բջիջներում,—այնպիսի տարրեր, վորոնք ընդունակ չեն կոմմունիստական ավանգարդի դեր կատարելու, տարրեր, վորոնք գյուղում կապված են կուլակային տնտեսության հետ և հանդիսանում են պրոլետարիատի վրա մանր-բուրժուական ազդեցության հաղորդիչները. տարրեր, վորոնք աշխատանքը գործարանում դիտում են միայն վորպես իրենց սեփական անհատական տնտեսության հարստացման միջոց, մորթեպաշտ տարրեր, վորոնք ակտիվ կերպով չեն մասնակցում աշխատանքի դիսցիպլինայի բարձրացմանը, տարրեր, վորոնք անտարբերությամբ են վերաբերվում դեպի այնպիսի հակահեղափոխական յերևույթներն, ինչպիսին է հակասեմիտիզմը, տարրեր, վորոնք վերջնականապես չեն հեռացել կրոնական ծեսերից և այլն։

Առանց ամբողջ կուսակցությունը, նաև նրա արտադրական բջիջները զտելու, կուսակցությունը չի կարող լիովին իր շարքերում ընդգրկել զգալի քանակություն կազմող կուսակցական պրոլետարական ակտիվի լավագույն տարրերը՝ ամրապնդելու համար

կուսակցության հիմնական պրոլետարական կորիզը։ Առանց իր շարքերի այդպիսի զտման, միաժամանակ լավագույն պրոլետարական էլեմենտներին սիստեմատիկ կերպով ընդունելով, գործարանային բջիջները նոր էտապում անկարող կլինեն իրագործել այն խոշոր և բարդ խնդիրները, վորոնք պահանջում են մաքսիմալ միատարրություն, միասնականություն, գիտակցություն և պրոլետարական լենինյան տոկունություն։

6. Կուսակցությունն առանձնապես ուշադրությամբ պետք է ստուգի **գյուղական բջիջների** կազմը, նրանց վճռականորեն զտելով նրանց մեջ թափանցած դասակարգայնորեն խորթ տարրերից կամ կուլակային տարրերի, առևտրականների, բեյերի և հոգևորականության հետ միացած տարրերից, կուսակցության այն անդամներից, վորոնք կիրառում են այնպիսի քաղաքականություն, վորը կուսակցությունից յետ է մղում բատրակներին և չքավորներին, այն կուսակցականներից, վորոնք չեն մասնակցում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ձեռնարկումները կյանքում իրագործելու համար, չինովնիկական տարրերից, վորոնք չեն կենսագործում կուսակցության դիրեկտիվները չքավորի վրա հենվելու և գյուղացիության միջակ մասսաների հետ դաշինք կնքելու մասին, կուսակցության այն անդամներից, վորոնց տնտեսական աճումը մթագնել է նրանց համար գյուղում կոմմունիստական պրոպագանդ մղելու և կազմակերպելու խնդիրը, հեղափոխական օրինականությունը չարամտորեն խախտողներից, իշխանությունն անձնական նպատակներով չարարկողներից։



Միայն գյուղական բջիջների այդպիսի զտումը՝ կապված մի կողմից բատրակային, չքավորական և միջակ ակտիվին ստուգմանը և զտմանը մասնակից դարձնելու հետ, կուսակցության քաղաքականությունը գյուղացիության լայն մասսաների առաջ լայնորեն պարզաբանելու հետ և մյուս կողմից գյուղի իսկապես նվիրված կոմմունիստական տարրերի նկատմամբ խընամքով վերաբերվելու, ակտիվիստների, քաղաքացիական պատերազմի նախկին մասնակիցների և Կարմիր բանակի դպրոցն անցածների շրջանից դուրս յեկած հասարակական աշխատողներին խնամքով վերաբերվելու հետ, վորոնք իսկապես օգնում են գյուղում կուսակցության սոցիալիստական ձեռնարկումների իրագործմանը—միայն այդպիսի զտումը կարող է գյուղական բջիջները դարձնել կոմմունիստական կուսակցության հենակետերը գյուղում, ամրապնդել վստահությունը կուսակցության նկատմամբ, կուսակցության շարքերը գրավել լավագույն կոմմունիստական տարրերին, բատրակներին և չքավորներին և առաջ մղել գյուղատնտեսության կոլեկտիվացման գործը։

7. **Վոչ արտադրական բջիջների** զտումը 13·րդ համագումարից հետո ընդհանուր առմամբ ցույց տվեց, վոր նրանց սոցիալական կազմն զգալիորեն բարելավվել է։ Վոչ արտադրական բջիջների կազմում կային սոցիալական ծագմամբ բանվորներ 39,4 տոկոս, գյուղացիներ՝ 36,7 տոկոս, ծառայողներ և այլք՝ 23,9 տոկոս։ Թեև վոչ արտադրական բջիջները շարունակ լըրացվում են նոր պրոլետարական խավերով, վոր կուսակցության կողմից առաջ են քաշվում բանվորական

շրջանից, այնուամենայնիվ վոչ արտադրական բջիջ-
ները հաճախ ամենից ավելի յենթակա յեն վոչ պրո-
լետարական տարրերի ազդեցությանը, լցված են նրան-
ցով։

Լենինը հաճախ մատնանշում եր, վոր «կարյե-
րիստները և կողմնակի անցորդները պետք է անխու-
սափելիորեն ձգտեն խցկվել կառավարական կուսա-
կցության մեջ»։ «Այստեղ-այնտեղ մեր շարքերը խըց-
կըվել են կարյերիստներ, վորոնք կոմմունիստներ են
կոչվել և խաբում են մեզ, վորոնք մեր շարքերն են
սողոսկել նրա համար, վոր կոմմունիստները ներկա-
յումս իշխանության գլուխ են կանգնած»։ Լենինը
խորհուրդ եր տալիս զտել կուսակցությունը «շոր-
թիչներից», «ավանտյուրիստներից», «կուսակցության
առերևույթ անդամներից», «նրանցից, վորոնք ցան-
կանում են միայն ոգտվել կառավարական կուսակցու-
թյան անդամի դրության ոգուտներից, վորոնք չեն
ցանկանում կրել կոմմունիզմի ոգտին կատարվող նվիր-
ված աշխատանքի դժվարությունները», «վորպեսզի
կուսակցության մեջ թողնվեն միայն գիտակցորեն և
անկեղծորեն կոմմունիզմին նվիրվածները», վորպեսզի
կուսակցության մեջ մտնեն միայն «բանվորական պե-
տությանը բարեխղճորեն նվիրվածները, միայն ազնիվ
աշխատավորները, միայն կապիտալիզմի պայմաննե-
րում կեղեքված մասսաների իսկական ներկայացու-
ցիչները» (Լենին)։ Հատկապես վոչ արտադրական
բջիջներում հնարավոր է կուսակցական։ դիրքի ամե-
նից լայն ոգտագործումը, շահամոլական նպատակնե-
րով վատնումներ, խնամիությունը, կարյերիզմը, բյու-
րոկրատական վերաբերմունքը դեպի մասսաները։



Հատկապես այստեղ են տեղի ունենում մասսաներին
յետ մղող «կենցաղային նեխման» փաստեր. հատկա-
պես այս բջիջներում սոցիալապես խորթ, բյուրոկրա-
տացած, սողոսկող և քայքայված տարրերն ամենից
ավելի վնաս են տալիս կուսակցությանը՝ հատկապես
վոչ արտադրական բջիջներում կան ամենից ավելի
մեծ թվով ուրիշ կուսակցություններից դուրս յեկած-
ներ, վորոնք չեն վերամշակվել բոլշևիկյան կուսա-
կցության մեջ, պահպանել են իդեոլոգիապես նրան
խորթ հայացքներ։

Մինչդեռ այդ բջիջների կազմից, նրանց աշխա-
տանքի վորակից, նրանց կուսակցական կայունու-
թյան աստիճանից, մասսաների հետ նրանց ունեցած
կապից է կախված կուսակցական և անկուսակցական
բանվորների և գյուղացիների լայն մասսաների վստա-
հությունը խորհրդային պետության տնտեսական որ-
գանների, պրոֆմիությունների, կուսակցության նկատ-
մամբ և վերջինների կոմմունիստական աշխատանքի
հաջողությունը։ Դրա համար զտումը բոլոր վոչ կոմ-
մունիստական քայքայված, անհարազատ, բյուրոկրա-
տացած, սողոսկող, մորթեպաշտ տարրերից, իրենց
պարտականություններին չինովնիկորեն մոտեցողնե-
րից, պետք է կատարվի առանձնապես մանրակրկիտ
կերպով։

Ընդսմին անհրաժեշտ է առանձնապես խնամքով
վերաբերվել բանվոր և բանվորուհի առաջքաշվածնե-
րին, հաշվի առնելով աշխատանքի առաջին շրջանում
նրանց համար անսովոր նոր ձևերի յուրացման դժվա-
րությունները և կապել վոչ արտադրական բջիջների
զտումը բանվորներին և բանվորուհիներին տնտեսա-

կան, կուսակցական և վարչական ապպարատի մեջ ավելի յեռանդուն, մանրակրկիտ կերպով մտածված առաջ քաշելու հետ։

8. Կուսակցության շարքերի ձեռնարկվող ստուգումը և զտումը պետք է, այսպիսով, կուսակցությունը դարձնի ավելի միատարր, ազատի նրան այն ամենից, ինչ վոր վոչ կոմմունիստական է։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այդպիսի ստուգումը կապված է հսկայական դժվարությունների հետ և պետք է կատարվի ինչքան կարելի յե ավելի հանգամանորեն, զտման խնդիրներն ինչպես կուսակցության բոլոր անդամներին և թեկնածուներին, նույնպես և անկուսակցական բանվորներին և գյուղացիներին ամենալայն կերպով պարզաբանելուց հետո, կուսակցության յուրաքանչյուր անդամի և թեկնածուի նկատմամբ վորոշակի պահանջներ առաջադրելով՝ նրա բարոյական մակարդակի, մասսաների հետ ունեցած կապի, կուսակցության աշխատանքին ակտիվ մասնակցելու, սոցիալիզմի կառուցմանն ակտիվ մասնակցելու նկատմամբ, և այլն։ Կուսակցությունը նախազգուշացնում է ստուգումը կուսակցության անդամի անձնական կյանքի մանր և տառակերական փորփորումների՝ վերածելու, ստուգումը գռեհկացնելու, այն անցկացնելիս կոմմունիստական կուսակցության դասակարգային խնդիրներից չելնելու դեմ։ Զտումը պետք է անխնա կերպով կուսակցության շարքերից դուրս շպրտի բոլոր նրան խորթ, նրա հաջողությունների համար վնասակար, նրա պայքարին անտարբեր տարրերին, անուղղելի բյուրոկրատներին, սողոսկողներին, դասակարգային թշնամու հետ կապված և նրան ոգնող տար-



րերին, տնտեսական սեփականատիրական աճման հետևանքով կուսակցությունից կտրվածներին, հակասեմիտներին, կրոնական կուլտի թաքնված կողմնակիցներին, միրկացնելով թաքնված տրոցկիստներին, մյասնիկովցիներին, դեցիստներին և այլ հակակուսակցական խմբակների կողմնակիցներին և զտելով նրանցից կուսակցությունը։ Սակայն զտումը պետք է միաժամանակ ամրապնդի կազմակերպության աշխատանքը, ստուգի բջիջների աշխատանքը, ավելի ընկերական հարաբերություններ ստեղծի կուսակցության անդամների միջև, բարձրացնի յուրաքանչյուրի պատասխանատվության զգացմունքը ամբողջ կուսակցության քաղաքականության ու բախտի նկատմամբ, թափ հաղորդի քաղաքական գիտելիքների մակարդակի բարձրացմանը, ուժեղացնի պայքարը բյուրոկրատիզմի դեմ, բարձրացնի կազմակերպությունների բոլոր անդամների ակտիվությունն, ուժեղացնի նրանց կապը բանվորների և գյուղացիների հետ, ուժեղացնի նրանց ակտիվ մասնակցությունը գյուղի սոցիալիստական վերակառուցմանն, արտադրության և կառավարման ռացիոնալիզացիային, աշխատանքային դիսցիպլինայի բարձրացմանը և ամեն տեսակի ավելորդությունների դուրս վտարմանը և այլն։ Ստուգումն, այդպիսով, չպետք է կրի նեղ-քննական և վոչ ինդատական քննչական բնույթ. այն դեպքերում, յերբ կուսակցության անդամը բոլոր այլ հատկանիշներով արժանի յե լինել կուսակցության անդամ, սակայն նրա քաղաքական գրագիտության մակարդակն անբավարար է, դա վոչ մի դեպքում չպետք է հիմք դառնա նրան վտարելու, այլ պետք է հաշվի առնվի՝

ստեղծելու համար այնպիսի պայմաններ, վորոնք օգնեն կուսակցության յուրաքանչյուր անդամին վերացնելու համար այդ պակասությունը։ Ցերեան հանելով կուսակցության յուրաքանչյուր անդամի և թեկնածուի պետքականությունը կուսակցական պարտականությունների կատարման մեջ, օգնելով ուղղել նրանց սխալները և բացերը, կուսակցության շարքերում թողնելով կոմմունիզմին նվիրված բոլոր տարրերին, ստուգումը պետք է միաժամանակ զուգընթացաբար հաստատի, թե ինչքան ճիշտ կերպով տվյալ բջիջն իրագործում է ղեկավարությունը և ինչքան կուսակցականների սխալները և բացերը կապված են այդ ղեկավարության հետ։

9. Ստուգումը և զտումը կարող են հաջող լինել միայն այն դեպքում, յեթե նրանց զուգընթաց տեղի ունենա քննադատության և ինքնաքննադատության ամենալայն ծավալում տեղական և ընդհանուր մամուլում, պատի թերթում, կուսակցական ժողովներում և բանվորների ու գյուղացիների մասնակցությամբ տեղի ունեցող դռնբաց ժողովներում։ Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի անկուսակցականները մասնակից դարձվեն ստուգմանը և զտմանը։ Անհրաժեշտ է ղեկավարվել Լենինի հրահանգով, վորը գրել է.

«Կան տեղեր, վորտեղ կուսակցությունը զտում են, հենվելով գլխավորապես փորձի, անկուսակցական բանվորների ցուցմունքների վրա, ղեկավարվելով նրանց ցուցմունքներով, հաշվի նստելով անկուսակցական պրոլետարական մասսայի ներկայացուցիչների հետ։ Ահա սա ամենից



գնահատելին, ամենից կարևորն է։ Ցեթե մենք իսկապես կարողանայինք այդպես զտել կուսակցությունը վերևից մինչև ներքև, չքաշվելով վոչվոքից», հեղափոխության նվաճումներն իսկապես խոշոր կլինեյին»։ (Լենին. հատոր 18, մաս 1, եջ 360)»։

«Իհարկե, մասսայի բոլոր ցուցմունքներին չպետք է յենթարկվել, քանի վոր յերբեմն և մանավանդ բացառիկ հոգնածության, չափազանց դժվարություններից և տանջանքներից՝ ծայրահեղ հոգնության տարիներին մասսան նույնպես յենթարկվում է բոլորովին վոչ առաջավոր տրամադրությունների։ Սակայն մարդկանց գնահատելիս, «սողոսկողներին»,«կոմիսսարացածներին» և «բյուրոկրատացածներին» բացասական վերաբերմունք ցույց տալու գործում անկուսակցական, պրոլետարական մասսայի ցուցմունքներն, իսկ շատ դեպքերում նաև անկուսակցական գյուղացիական մասսաների ցուցմունքները վերին աստիճանի արժեքավոր են։ Աշխատավոր մասսան խոշորագույն զգայնությամբ վորսում է այն տարբերությունը, վոր կա ազնիվ և նվիրված կոմմունիստների և այնպիսիների միջև, վորոնք զզվանք են առաջացնում այնպիսի մարդու մեջ, վորը քրտինքով է հաց աշխատում, չունի վոչ մի արտոնություն, վորի առաջ կառավարիչ դառնալու վոչ մի ճանապարհ չկա»։ (Լենին)։

«Զտել կուսակցությունը, հաշվի նստելով անկուսակցական աշխատավորների ցուցմունքների հետ,-- դա մեզ լուրջ արդյունքներ կտա։

Այդ կուսակցությունը կդարձնի ավելի ուժեղ ավանգարդ, քան առաջ, կդարձնի այնպիսի ավանգարդ, վորն ավելի ամուր ե կապված դասակարգի հետ, ավելի ընդունակ ե ահագին դժվարությունների և վտանգների մեջ»։ (Լենին, հատոր 18, մաս 1-ին, եջ 360)։

Սակայն, անկուսակցական բանվորներին և գյուղացիներին լայնորեն մասնակից դարձնելով կուսակցության շարքերի զտմանը, անհրաժեշտ ե.

1) Վոչ մի դեպքում դռնբաց ժողովները չվերածել պրոլետարիատին խորթ տարրերի կողմից կուսակցությունը դեմագոգորեն վարկաբեկելու թատերաբեմի, և թույլ չտալ վոչ աշխատավորական, դասակարգայնորեն խորթ տարրերի մուտքն այդ ժողովները։

2) Վոչ մի դեպքում քաշ չգալ անկուսակցական մասսայի պոչից, ուր վոր գործը վերաբերում ե այս կամ այն կուսակցականի կուսակցական գծի ճշտությունը վորոշելուն։

3) Ոգտագործել այդպիսի դռնբաց ժողովները՝ պարզաբանելու համար կուսակցության գիծը և կուսակցության շարքերը ներգրավելով անկուսակցական բանվորների, բատրակների և չքավորների լավագույն տարրերին։

Բոլոր այս ցուցմունքները կուսակցության մեջ յեղած արժեքավոր կոմմունիստական տարրերի նկատմամբ զգույշ, խնամքոտ վերաբերմունք ունենալու անհրաժեշտության վերաբերյալ, զտման նկատմամբ սկզբունքային մոտեցումը պահպանելու անհրաժեշտության և զտման ու ստուգման ժամանակ լիակատար ընկերական մթնոլորտ ստեղծելու անհրաժեշ-



տության նկատմամբ՝ առանձնապես վերաբերում են դռնբաց ժողովներին, վորոնց ներկա յեն լինելու նաև անկուսակցականները։

10. Ստուգման շրջանում առանձնապես կարևոր խնդիր ե ընկնում կուսակցական մամուլի վրա։ Անհրաժեշտ ե հոգալ, վորպեսզի հենց սկզբից ապահովվի զտման խնդիրների լիովին կայուն, սկզբունքային լուսաբանումը, վորպեսզի ամբողջ ժամանակ պահպանվի զտման խնդիրների քննության վորոշ քաղաքական մակարդակ, վորպեսզի ամբողջի, վոր անպետք ե՝ կուսակցության շարքերից անխնա կերպով դուրս շպրտելու փաստերի լուսաբանման հետ միասին, մամուլում բավականաչափ լայն կերպով նշվի ստուգող կազմակերպության աշխատանքի մեջ յեղած ամբողջ արժեքավորը և դրականը։ Հարվածելով բոլոր անպետք տարրերին, մամուլը վոչ մի դեպքում չպետք ե սարսափեցնի և հալածի այն ընկերներին, վորոնք պատահաբար, անփորձության հետևանքով, կատարել են այս կամ այն սխալը։ Տեղական վերահսկիչ հանձնաժողովները պետք ե ղեկավարեն այն ամբողջի լուսաբանումը մամուլում, վոր յերևան կհանի ստուգումը, թույլ չտալով կուսակցության արատավորումը նրա առանձին անդամների անպետքության կամ թերացումների պատճառով։

11. Կուսակցությունը պետք ե ուշադրություն դարձնի զտման ամենամանրակրկիտ կերպով նախապատրաստելու վրա, վորպեսզի զտման և ստուգման պրոցեսը կատարվի հնար յեղածին չափ կարճ ժամանակում։ Դրա համար անհրաժեշտ ե ամենամանրամասն նախապատրաստական աշխատանք, զտման խնդիրնե-

...ի լուսաբանումը մամուլում և ժողովներում, այն պահանջների պարզաբանումը, որ կուսակցությունն առաջադրում է զտման ժամանակ կուսակցության յուրաքանչյուր անդամի և թեկնածուի նկատմամբ— ոչ միայն ամբողջ կուսակցական մասսայի, այլև այն անկուսակցականների համար, որոնք կներգրավվեն՝ օգնելու համար կուսակցությանը նրա շարքերի ստուգման և զտման ժամանակ։

Հաշվի առնելով նախկին ստուգումների ժամանակ յեղած սխալներն, ինչպես նաև այն, որ ստուգման են յենթակա կուսակցության մոտ 1.500.000 անդամները և թեկնածուները, որոնք ցրված են հսկայական տերրիտորիայի վրա, աշխատում են ամենաբազմազան պայմաններում, կուսակցությունը պետք է առանձնապես խնամքով նախապատրաստվի այս ստուգմանը։ Կուսակցությունը բացառիկ ուշադրություն է հրավիրում ստուգող հանձնաժողովների կազմի վրա, որոնց մեջ պետք է ընդգրկել հին բոլշևիկյան գվարդիայից ամենակայուն և անարատ կուսակցականներին, նաև այն կուսակցականներին, որոնք կուսակցության մեջ են մտել 1917 թվին և քաղաքացիական պատերազմների ժամանակ, ապահովել այդ հանձնաժողովների հնարավորին չափ կայուն պրոլետարական կազմը։ Այդ ստուգող հանձնաժողովների կազմը պետք է նախապես լայնորեն հայտնի դառնա բանվորական մասսաներին, որպեսզի բանվորները, կուսակցության անդամները կարողանան ժամանակին ուղղել այդ ստուգման հանձնաժողովների կազմն այնտեղ, որտեղ նրանք կազմված են անբավարար։ Այս հանձնաժողովները պետք է մանրա-



կրկիտ կերպով նախապատրաստվեն աշխատանքի, ճշտեն ստուգման խնդիրները յուրաքանչյուր բջիջում, ելնելով նրա կազմից, աշխատանքի պայմաններից, զարգացման մակարդակից, և այլն։

12. Ներկա ստուգումը միայն այն դեպքում կըխուսափի բազմաթիվ սխալներից, յեթե կուսակցությունն ուշադրությամբ մոտենա կուսակցության յուրաքանչյուր անդամի և թեկնածուի, յեթե արատավորող մեղադրանքները շատ խնամքով ստուգվեն, յեթե ստուգման հանձնաժողովները կարողանան կանխել անձնական հաշիվների մաքրելը ստուգման ժամանակ, առանձնացնել խմբակային պայքարի, խառնակչության, դավադրելու, գիտակցաբար վարկաբեկելու տարրերը, յեթե ստուգումը պահվի որոշ սկզբունքային մակարդակի վրա, խուսափելով մանրակրկիտությունից, չոր մոտեցումից, շաբլոնից։ Կուսակցությունն առանձնապես անհրաժեշտ է համարում նախազգուշացնել ստուգողների նկատմամբ ձևական վերաբերմունք ունենալու դեմ։ Ստուգող հանձնաժողովները պարտավոր են հաշվի առնել կուսակցության անդամների և թեկնածուների աշխատանքի բոլոր առանձնահատկություններն արտադրության մեջ, հիմնարկում, կուսակցականների կյանքի կենցաղային և նյութական պայմանները, ազգային առանձնահատկությունները, հիվանդ ընկերների, կանանց, գյուղատնտեսական բանվորների, գյուղացիների, յերիտասարդության աշխատանքի առանձին պայմանները և այլն։ ԿՎՀ պետք է մշակի ամենամանրամասն ղեկավարող հրահանգներ տեղական վերահսկիչ հանձնաժողովների համար, որոնք կանխեն հնարավոր սխալները։ ԿՎՀ

պետք է ամբողջ ժամանակ հետևի ստուգմանը, ստուգման իսկ ընթացքում ուղղելով տեղական վերահսկիչ հանձնաժողովների կամ առանձին ստուգող հանձնաժողովների աշխատանքի մեջ յեղած այս կամ այն սխալները։

13. Յելնելով այս նկատառումներից՝ կենտկոմի և ԿՎՀ միացյալ պլենումը վորոշում է.

1. Կատարել կուսակցության ընդհանուր զտում, այնպես վոր կուսակցական շարքերի ստուգումն ավարտվի մինչև Համ Կ(բ)Կ 16-րդ համագումարը։ Կուսակցական բջիջների առանձին կատեգորիաների (գյուղական, արտադրական, ուսանողական, և այլն) ստուգման որացուցային ժամանակամիջոցները պետք է նշանակվեն, հաշվի առնելով աշխատանքի առանձնահատկությունները (գյուղական բջիջներում կարևորագույն դաշտային աշխատանքների միջև ընկած ժամանակաշրջանում, բարձրագույն դպրոցներում վոչ ստուգումների ժամանակ, և այլն)։ Այդ որացուցային ժամանակամիջոցները պետք է նշվեն յուրաքանչյուր առանձին կազմակերպության կողմից։

2. Հանձնարարել ԿՎՀ-ին տեղական վերահսկիչ հանձնաժողովների համար ամենամանրամասն ղեկավար սկզբունքներ մշակել ստուգող հանձնաժողովների ընտրության կարգի մասին, ստուգման և զտման անցկացման կարգի մասին, ստուգող հանձնաժողովների աշխատանքի փորձի հաշվառման մասին, նրա ղեկավարության մասին և տեղական ստուգող հանձնաժողովների և վերահսկիչ հանձնաժողովների վորոշումները բողոքարկելու կարգի մասին, ապահովելով ստուգող հանձնաժողովների վերին աստիճանի խնամքով



ընտրությունը և նրանց մշտական ղեկավարությունը ԿՎՀ և ղեկավարող վերահսկիչ հանձնաժողովների կողմից տեղերում (հանրապետական, յերկրային, շրջանային)։

3. Կուսակցության զտումը կատարել դռնբաց, անկուսակցական բանվորների և գյուղի բատրակային չքավոր, միջակ մասսաների առաջ։

4. Լայն նախապատրաստական կամպանիա անցկացնել ինչպես մամուլում, նույնպես և կուսակցական ժողովներում, ծանոթացնելով կուսակցության բոլոր անդամներին և թեկնածուներին, ինչպես նաև անկուսակցական բանվորներին և գյուղացիներին ստուգման և զտման խնդիրների հետ։

# ՀՐԱՀԱՆԳ

## ՀԱՄ Կ (Բ) Կ ՇԱՐՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՏՄԱՆ ՅԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Համամիութենական *16*-րդ կոնֆերենցիայի յեվ Համ. Կ (բ) Կ Կենտկոմի ու ԿՎՀ միացյալ պլենումի ընդունած բանաձևի լրացումն ու զարգացումը)**

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ

*1. Զտման և ստուգման յենթակա յեն Համկոմկուսի բոլոր անդամներն ու թեկնածուները։*

*Համ Կ(բ) Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի անդամները, վորպես Համ Կ (բ) Կ համագումարում ընտրվածներ, ստուգման յենթակա յեն միայն այդ դեպքում, յեթե կուսակցական վորևե ժողով և կամ կուսակցության անդամների վորևե մի խումբ հիմնավորված հայտարարություն անի նրանց կազմից վորևե մեկին ստուգման յենթարկելու անհրաժեշտության մասին։ Ստուգման կարգն այդ դեպքում սահմանվում է ԿՎՀ-ի կողմից։*

*2. Վորովհետև ստուգող շրջանային հանձնաժողովները պետք է կազմակերպվեն մարզային կազմակերպությունների կողմից, այս կապակցությամբ՝ ստուգումը պետք է անցկացվի առաջին հերթին կուսակցական յերկրային ու մարզային կազմակերպությունների և*



*ազգային կոմկուսակցությունների ղեկավար կազմի մեջ։*

*Այդ ստուգման համար ԿՎՀ-ի կողմից առանձնացվում են հատուկ ստուգող հանձնաժողովներ, վորոնք անց են կացնում կուսկոմների բոլոր անդամ ու թեկնածուների, մարզային ու յերկրային կազմակերպությունների և ազգային կոմկուսակցությունների վերահսկիչ հանձնաժողովների անդամների ստուգումը։ Ըստվորում այս ստուգումը կատարվում է ընդհանուր կարգով՝ բջիջների միջոցով այնպես, ինչպես կուսակցության բոլոր անդամների ու թեկնածուների ստուգումը։*

*Վորպեսզի ստուգող հանձնաժողովների կազմակերպման գործը չձգձգվի, Համ ԿՎՀ-ի ստուգող հանձնաժողովներն ամենից առաջ ստուգում են հիշված կազմակերպությունների կուսակցական կոմիտեների նախագահությունների և բյուրոների անդամներին և վերահսկիչ հանձնաժողովների կուսկոլլեգիայի անդամներին, ինչպես նաև շրջանային ռազմական կուսհանձնաժողովների անդամներին, վորոնք կազմակերպում են շրջանային և ռայոնական կազմակերպությունների ստուգող հանձնաժողովների անդամների կազմը։*

*3. Համկոմկուսի շարքերի ընդհանուր զտման և ստուգման հիմնական խնդիրը հանդիսանում է նրա շարքերի վճռական մաքրումը վոչ կոմմունիստական տարրերից (մանրամասն տես 16-րդ կոնֆերենցիայի բանաձևը ՀամԿ (բ)Կ անդամների և թեկնածուների ստուգման և զտման մասին)։*

*Կուսակցությունը վոչ կոմմունիստական տարրերից վճռականորեն մաքրելու հետ միաժամանակ կու-*

սակցության ստուգումն ու զտումը խնդիր է դնում՝ կուսակցական-դաստիարակչական ազդեցություն ունենալ այն կոմմունիստների վրա, վորոնք լինելով կուսակցության նվիրված ու ակտիվ անդամներ, կատարել են այս կամ այն սխալները: Նման ընկերների նկատմամբ հենց ստուգման ժամանակ անհրաժեշտ է կիրառել ընկերական զրույցները և անհրաժեշտության դեպքում միայն գործադրել կուստույժերը:

ՀամԿ(բ)Կ շարքերի ստուգումն ու զտումը նպատակ է դնում վոչ միայն ստուգել կոմմունիստների անձնական ունակությունները, այլև ստուգել բջիջների աշխատանքների կազմակերպչական դրությունն ու վորակն ամբողջությամբ և զուգընթացաբար պարզել նաև ստուգվող բջիջի աշխատանքի կազմակերպման և ղեկավարության մեթոդները՝ համապատասխան կոմիտեյի կողմից: Ընդվորում բջիջների աշխատանքների գնահատականի ժամանակ չի կարելի սահմանափակվել նրանց բացասական հատկությունները շեշտելով, այլև անհրաժեշտ է մատնանշել նաև նրանց աշխատանքի կարևորագույն նվաճումները:

4. Կուսակցության շարքերի զտումն ու ստուգումը նախապատրաստելու և այն կիրառելու ժամանակ անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի այդ «հսկայական-կարևոր խնդրի» (Լենին) շուրջը լայն կերպով ծավալվի ամբողջ կուսակցության ինքնաքննադատությունն ու ինքնագործունեությունը, այդ բանի համար օգտագործելով յեղած բոլոր հնարավորությունները (հատուկ կուսակցական ժողովները, թերթերը, բանավոր ու գրավոր հայտարարությունները, զտող հանձնաժողովներին կազմակերպչական և



տեխնիկական ոգնությունը և այլն): Ինքնաքննադատության և ինքնագործունեության այս ծավալումը պետք է տեղի ունենա ներկուսակցական դեմոկրատիայի հիման վրա: Վերստուգիչ հանձնաժողովների, ստուգող հանձնաժողովների, ինչպես նաև բոլոր մյուս կուսօրգանների աշխատանքը պետք է ընթանա ամբողջ կուսակցության, և առաջին հերթին ստուգող կազմակերպության վերահսկողության ներքո: Յուրաքանչյուր բջիջ իր ընդհանուր ժողովում կարող է քննարկության յենթարկել ստուգող հանձնաժողովի վորևե վորոշումը, բողոքել այդ վորոշման դեմ, սակայն առանց փոփոխման յենթարկելու այդ վորոշումը:

5. Կուսակցության շարքերի զտումն ու ստուգումն անհրաժեշտ է անցկացնել համաձայն Լենինի ցուցմունքի՝ «հիմնվելով անկուսակցական բանվորների և գյուղացիական մասսաների փորձի ու ցուցմունքների վրա»: Անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի անկուսակցական բանվորները, բատրակները, չքավորությունը, միջակ գյուղացիությունը և հատկապես նրանց ակտիվը ժամանակին տեղեկանան կուսակցության զտման և ստուգման նպատակներին ու խնդիրներին և ստուգվող բջիջների դռնբաց ժողովների ժամանակի մասին, վորպեսզի այդ ժողովների մասսայականությունը տեխնիկական-կազմակերպչական թերությունների պատճառով (անհարմար ժամանակ և ժողովի անհարմար տեղ, և այլն) չվիժի:

Սրա հետ միասին կուսակցական ղեկավարությունը լիովին ապահովելու համար անհրաժեշտ է մի-

ջոցներ ձեռք առնել՝ իրագործելու 16-րդ կուսկոնֆերենցիայի բանաձևի 9-րդ հատվածը։

6. Կուսակցության շարքերի և կուսակցական կազմակերպությունների զտումն ու ստուգումն անցկացնելիս անհրաժեշտ է լայն, մասսայական աշխատանք ծավալել՝ պարզաբանելու կուսակցության հերթական խնդիրները և կոմմունիստական ավանգարդի պարտականությունները, վորոնց տեսանկյան տակ պետք է ընթանա կուսակցության շարքերի ստուգումն ու զտումը։

Միաժամանակ ինկատի ունենալով այն, վոր կուսակցության շարքերի ստուգումն ու զտումը դրված է կուսակցության շարքերը հասարակական աշխատանքների մեջ փորձված բանվորների, բատրակների և չքավորների ներկայացուցիչներով լրացնելու հարցի հետ անխզելի կապակցությամբ՝ անհրաժեշտ է լայնորեն ոգտագործել կուսակցական բջիջների զտման և ստուգման նվիրված դռնբաց ժողովները, նպատակ ունենալով լայնորեն ծավալել կուսակցության մեջ բանվորների ներգրավման գործը։

7. ՀամԿ(բ)Կ շարքերի զտումն ու ստուգումը պետք է անցկացվի Լենինի ավանդների համաձայն՝ «չքաշվելով վոչվոքից», սակայն ստուգող հանձնաժողովներն ու ստուգվող բջիջները պարտավոր են հակահարված տալ նրանց, ովքեր կփորձեն զտումն ու ստուգումն ոգտագործել անձնական հաշիվներ մաքրելու, խմբակային պայքարի նպատակով. բոլոր խառնակիչներին, կլյաուզնիկներին, ինչպես նաև նրանց, վորոնք փորձում են վարկաբեկել կոմմունիստներին, կուսակցության գիծն աշխատանքային դիսցիպլինայի, խնայո-



ղության ռեժիմի, արտադրության ռացիոնալիզացիայի նկատմամբ անշեղորեն կիրառելու, ինչպես և աշխատանքի պրոցեսում իրենց յենթակա ընկերներից վորպես ղեկավար՝ աշխատանքի ճշգրիտ և լիակատար կիրառում պահանջելու համար։ Սրա հետ զուգընթաց անհրաժեշտ է վճռական հակահարված տալ նրանց, ովքեր կլյաուզնիկներ և խառնակիչներ են համարում նրանց, վորոնք անկեղծությամբ ձգտում են ոգնել կուսակցությանը զտման ընթացքում յերևան հանելու իր շարքերում յեղած անհարազատ տարրերին և կամ ցույց տալ իրական թերությունները, պակասություններն ու սխալներն այս կամ այն ընկերոջ աշխատանքի մեջ։

## 2. ԶՏՄԱՆ ՅԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Զտման և ստուգման ընդհանուր ղեկավարությունն իրագործվում է ՀամԿ(բ)Կ ԿՎՀ-ի, տեղերում՝ տեղական Վ. Հանձնաժողովների կողմից։ Զտումն անցկացնող անմիջական գործառնական որգանները բջիջներում հանդիսանում են ստուգող հանձնաժողովները։ Ստուգող հանձնաժողովների կազմը հաստատվում և համապատասխան (շրջանային, նահանգական, ռայոնական և գավառային այնտեղ, վորտեղ նրանք գոյություն ունեն) վերահսկիչ հանձնաժողովների կողմից և համաձայնեցվում է համապատասխան կուսակցական որգանների հետ։ Ստուգող հանձնաժողովների նախագահները հաստատվում են վերադաս Վ. Հ.-ների կողմից։

9. Կուսակցության շարքերի զտման և ստուգման ղեկավարությունը գլխավորապես պետք է հիմնվի ստուգող հանձնաժողովների և վերահսկիչ հանձնաժողովների միջև յեղած կենդանի կապի, իսկ վերջիններիս՝ ավելի վերադաս ՎՀ-ի և ՀամԿ(բ)Կ ԿՎՀ-ի հետ ունեցած կապի հիման վրա։ Կենդանի ղեկավարող այս կապը պետք է իրագործվի վերադաս վերահսկիչ հանձնաժողովների պատասխանատու աշխատողներին ստորադաս ՎՀ-ներին ոգնության ուղարկելու միջոցով։

10. Ժամանակ առ ժամանակ տեղական ՎՀ-ները գումարում են ստուգող հանձնաժողովներին՝ ստուգման ընթացքի մասին զեկուցումներ լսելու, փորձը փոխանակելու, ստուգող առանձին հանձնաժողովների աշխատանքների ընդհանուր գիծն ստուգելու և նրանց աշխատանքի մեջ յեղած առանձին բացերը վերացնելու համար։

11. Կուսակցական կոմիտեներն ու վերահսկիչ հանձնաժողովները կուսակցական կազմակերպությունների ստուգման և զտման ուղղությամբ պետք է նախապատրաստական աշխատանքներ տանեն ինչպես մամուլում, նույնպես և կուսակցական և բանվորական մասսաներում, լայն կերպով պարզաբանելով զտման նպատակներն ու խնդիրները, ինչպես և նրա իրագործման ձևերն ու մեթոդները։

Կուսակցության ստուգման և զտման ժամանակ հատկապես կուսակցական կազմակերպությունները պետք է ուշադրություն դարձնեն մամուլին, վորպես բացատրական մասսայական աշխատանքի և ամբողջ ստուգման և զտման կուսակցական ղեկավարության զենքի վրա։ Մասնավորապես հանձնարարվում է



զտման և ստուգման հարցերի շուրջը հրավիրել մամուլի և հատկապես մամուլի ստորին աշխատողների խորհրդակցություններ և ապահովել տպագիր որգանների համապատասխան բաժինների պատշաճ ղեկավարությունը կուսակցական կոմիտեների կողմից։

Վերահսկիչ հանձնաժողովները պետք է կազմակերպեն բանավոր և գրավոր հայտարարությունների նախնական ընդունման գործը—կուսանդամներից և անկուսակցական բանվորներից ու գյուղացիներից,—առանձին կազմակերպությունների դրության և առանձին կոմմունիստների մասին։

12. Կուսակցության մարզային, գավառական, շրջանային և գավմասային կոմիտեները իրենց տրամադրության տակ գտնված նյութերի և տեղեկությունների հիման վրա նախորոք պատրաստում են բջիջների համառոտ նախնական բնութագիրը, մատնանշելով նրանց աշխատանքի վորակն ամբողջությամբ, մատնանշելով և՛ կուսակցության գծի խեղաթյուրման մասին տեղեկությունները, և՛ կուսակցության դիսցիպլինայի խախտման դեպքերը, և՛ թե առանձին կոմմունիստների թերություններն ու բացերը։ Այդ բնութագրերը, նրանց մանրակրկիտ ստուգումից և քննելուց հետո, վորպես ստուգման մատերիալ ներկայացվում են ստուգող հանձնաժողովներին նրանց աշխատանքի սկզբում։

13. Կուսակցական բջիջները կամ բջիջային վերահսկիչ հանձնաժողովները (այնտեղ, վորտեղ նրանք կազմակերպված են) ՎՀ-ների ղեկավարությամբ, մինչև զտումն սկսելը, մասսաների մեջ տանում են լայն բացատրական աշխատանք զտման խնդիրների մասին,

կազմակերպում են կուսակցության առանձին անդամների մասին յեղած հայտարարությունների ընդունման և ստուգման գործը, անհրաժեշտության դեպքում պահանջում են, համապատասխան վերահսկիչ հանձնաժողովների կամ կուսակցական կոմիտեների միջոցով, բջիջի անդամների մասին լրացուցիչ տեղեկություններ։

14. Զտմանը և ստուգմանը նախապատրաստվելու կարևորագույն խնդիրը հանդիսանում է ստուգող հանձնաժողովների անդամների ընտրությունն ու հատուկ նախապատրաստումը։ Ստուգող հանձնաժողովները պետք է ընտրվեն հեղինակավոր, իդեոլոգիապես կայուն, քաղաքականապես գրագետ, անցյալում ուրիշ կուսակցությունների մեջ չեղած, կայուն կոմմունիստներից, հնարավորության դեպքում արտադրության մեջ յեղած բանվորներից։

Ստուգող յեռյակների անդամների կուսակցական ստաժը պետք է լինի 10 տարուց վոչ պակաս։ Առանձին դեպքերում ստանոկի մոտ աշխատող բանվորների նկատմամբ վերադաս վերահսկիչ հանձնաժողովների թույլտվությամբ (ազգային կոմկուսակցությունների ԿՎՀ-ների, յերկրային և մարզային) կարելի յե թույլատրել ստաժի նվազեցումը մինչև 8—7 տարվա։ Ազգային և ծայրամասային կազմակերպություններում կարելի յե թույլ տալ ստաժի պակասեցումը մինչև 5 տարվա՝ վերադաս վերահսկիչ հանձնաժողովների թույլտվությամբ։

Ստուգող հանձնաժողովների նախագահներին հնարավորության սահմաններում պետք է առանձնացնել վերահսկիչ հանձնաժողովների անդամներից, նրանց,



վորոնք լիովին համապատասխանում են վերոհիշյալ պահանջներին։ Ստուգող հանձնաժողովների ամբողջ կազմը մինչև ստուգման սկիզբը պետք է ամենամանրակրկիտ կերպով ստուգվի վերահսկիչ հանձնաժողովի կուսկոլլեգիայի կողմից։

Մինչև զտումը ստուգող յեռյակների բոլոր անդամները մանրամասն պետք է հրահանգվեն զտման նպատակի և խնդիրների և վերջինիս անցկացման մեթոդների և տեխնիկայի մասին, ինչպես և ծանոթանան նախորդ ստուգումների թերությունների և սխալների հետ։ Այդ նպատակով կազմակերպվում են ստուգող հանձնաժողովների անդամների հատուկ խորհրդակցություններ, վորտեղ մանրամասն քննության են առնվում այդ հարցերը։

Ընտրված և նախապատրաստված ընկերների քանակն այս հաշվով պետք է միքիչ գերազանցի այն քանակին, վորպիսին անհրաժեշտ է ըստ ծրագրի։ Այդ ռեզերվն օգտագործվելու յե անհրաժեշտության դեպքում՝ ստուգման տեմպն արագացնելու և փոխարինելու այն ընկերներին, վորոնք այս կամ այն պատճառով յետ են կանչվելու ստուգող հանձնաժողովներից։

Ստուգող հանձնաժողովների անդամների ցուցակները պետք է ժամանակին հրապարակվեն տեղական մամուլում։ Ստուգող հանձնաժողովի անդամի վերաբերյալ հայտարարություն ստացվելու դեպքում վերահսկիչ հանձնաժողովը պետք է շտապ քննության առնի այն։

15. Ստուգող հանձնաժողովների անդամների ընտրության և նախապատրաստության գործի հետ միաժամանակ կուսակցական կոմիտեներն ու վերահսկիչ

հանձնաժողովները պետք է հաշվի առնեն և պահանջված չափով հրահանգեն ավելի մեծ թվով կուսակցականների, վորոնք կարող են ոգտակար լինել ստուգող հանձնաժողովի անդամներին ոգնելու, զտման և ստուգման հետ կապված մասսայական բացատրական աշխատանքի, ինչպես նաև կուսակցական նագրուզկայի և զանազան կամավոր անվճար աշխատանքների (տեխնիկական քարտուղարության, հաշվետու զեկուցումների և սվոդկաների կազմակերպում, հայտարարությունների քննում և այլն) կարգով։

## 3. ՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՍՏՈՒԳՎՈՂՆԵՐԻՆ ՄՈՏԵՆԱԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

16. Կուսակցական բջիջների աշխատանքների և առանձին կոմմունիստների վորակի ստուգումն ու զտումը թե ստուգողների և թե ստուգման յենթարկվողների կողմից չպետք է դիտվի վորպես կուսակցության՝ այս կամ այն կերպ՝ անվստահությունը տվյալ բջիջի բոլոր կոմմունիստների վերաբերմամբ։ Ստուգող հանձնաժողովները պետք է ձեռք առնեն բոլոր միջոցները՝ իրենց ամբողջ աշխատանքի ընթացքում ստեղծելու իսկական ընկերական մթնոլորտ, վորտեղ կուսակցությանը նվիրված յուրաքանչյուր կոմմունիստ զգա, վոր ինքը կոչված է ոժանդակելու իր կազմակերպության բոլոր թերությունների հայտնաբերման և արմատախիլ անելու գործին։

Կոմմունիստի անձնական ստուգման ժամանակ միանգամայն անթույլատրելի յե շտապողականությու-



նը և վոչ ընկերական ու կոպիտ վերաբերմունքը։ Ստուգող հանձնաժողովները պարտավոր են ծանոթանալ յուրաքանչյուր կոմմունիստի այն մատերիալին, վորը վերաբերում է նրա հանցավոր լինելու գործին, և միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում չըհիշատակել հայտարարության անողի ազգանունը։ Յուրաքանչյուր ստուգվող իրավունք ունի ստանալու անհրաժեշտ ժամանակամիջոցը իրեն ներկայացված մեղադրանքները հերքելու և բացատրություններ ներկայացնելու համար։

17. Կոմմունիստի անձնական ստուգման ժամանակ ստուգող հանձնաժողովները պետք է զգուշությամբ վարվեն ստանոկի բանվորների, բատրակների և չքավոր-գյուղացիների հետ մասնավորապես.

ա) այդ խմբերի պատկանող կանանց, կին-մայրերին առանձնապես.

բ) այն ընկերներին, վորոնք կուսակցական-հասարակական մեծ ակտիվություն չեն կարողանում հայտնաբերել իրենց առողջական վիճակի դրության բերմամբ, առանձնապես քաղաքացիական կռիվների հաշմանդամների նկատմամբ։

18. Անհրաժեշտ է չափազանց զգույշ մոտեցում ունենալ ստուգման յենթարկվող կոմմունիստի վորակը բնորոշելիս այնպիսի արտահայտություններին, վորպիսին է «կուսակցական բալլաստ», «մասսաներից կտրված», «բարոյալքված» և այլն։ Կուսակցական բալլաստ չի կարելի համարել այն ընկերոջը, վորը կուսակցության կողմից իր վրա դրված խորհրդային, տնտեսական, պրոֆեսիոնալ, կոոպերատիվ և այլ պարտականությունները, վորոնք խլում են նրա ամբողջ ժամանակը, կատարում է բարեխղճորեն։

կուսակցությունն իրավունք ունի պահանջելու, վորպեսզի բոլոր կոմմունիստները,- ինչով ել վոր նրանք կուսակցության հանձնարարությամբ զբաղվելիս լինեն—ժամանակ հատկացնեն տեղերում տարվող կազմակերպչական, ագիտացիոն և պրոպագանդիստական աշխատանքներին. այդ աշխատանքների քանակը, սակայն, պետք ե համաչափ լինի նրա հիմնական աշխատանքի, յուրաքանչյուր ընկերոջ առողջական դրության և ընդհանուր կուլտուրական և քաղաքական գիտելիքների մակարդակին։

Սրա հետ միաժամանակ պետք ե յուրաքանչյուր կոմմունիստի կուսակցական աշխատանքի մեջ հայտնաբերած պասսիվության տվյալ դեպքում պարզել, թե արդյոք մեղավո՞ր չե ինքը բջիջը կամ ուրիշ կոմմունիստները։

Ճիշտ նույնությամբ անհրաժեշտ ե մանրակրկիտ և բազմակողմանիորեն քննության առնել այս կամ այն կոմմունիստի հասցեյին ուղղված մեղադրանքը մասսաներից կտրված լինելու մասին, դաժան հակահարված տալով նրանց, ովքեր կաշխատեն մեղադրել այդ բանում այն ընկերոջը, վոր պայքարում ե խվոստիզմի, նեղ համքարային տրամադրությունների և վողջ բանվոր դասակարգի շահերին հակասող պահանջների դեմ։

19. Միանգամայն անթույլատրելի յե կոմմունիստի անձնական կենցաղը մանրակրկիտ կերպով քրքրելը։

Կոմմունիստի կենցաղային այն գծերը, վորոնք հակահասարակական, հակակուսակցական բնույթ են կրում, ինչպիսին ե սիստեմատիկ հարբեցողությունը,



հրեատյացությունը, կրոնամոլությունը և այլն, կոմմունիստի կոչման հետ անհամատեղելի յեն։ Սակայն բոլոր նման դեպքերում բանվորների, գյուղում բատրակների և չքավորության վերաբերմամբ անհրաժեշտ ե մանրամասն քննության առնել այն հանգամանքը, թե այդ հատկությունների ունեցողները վորքանով անուղղելի յեն, արդյոք նրա գիտակցական աշխարհի զարգացման թուլության հետևանք չի, բջիջի հետադիմության և անգործունեության արդյունքը իր անդամներին կուսակցական դաստիարակություն տալու գործում։

20. Ստուգումը վերջին հաշվով պետք ե ոժանդակի կոմմունիստների քաղաքական գիտելիքների մակարդակի բարձրացման գործին։ Սակայն ստուգող հանձնաժողովներն անձնական ստուգման ժամանակ չպետք ե ստուգումը քաղգրագիտական քննության վերածեն. առանձնապես անթույլատրելի յե ստուգվողին տալ խճճված ու շփոթեցնող հարցեր։

21. Ազնվականներից, վաճառականներից, չինովնիկներից և մանր բուրժուազիայից սերվող, ինչպես և այլ կուսակցություններից յեկած կոմմունիստների նկատմամբ ստուգող հանձնաժողովները պետք ե պարզեն, թե արդյոք վերացրե՞լ են այդ կոմմունիստները պրոլետարիատին խորթ իդեոլոգիան և սովորույթները, և արդյոք գործնականում ապացուցե՞լ են իրենց նվիրվածությունը կուսակցությանը։ Առանձնապես ուշադրությամբ ստուգման պետք ե յենթարկել վոչ բանվորներին, վորոնք կուսակցության մեջ են մտել քաղաքացիական կռիվներից հետո։

Ստուգող հանձնաժողովները պետք ե հետա

քրքրվեն կոմմունիստների՝ բուրժուական էլեմենտների հետ ունեցած ազգակցական և այլ կապերով, գլխավորապես տնտեսական կախումների և բանվոր դասակարգին այդ խորթ էլեմենտների իդեոլոգիական ազդեցության տեսանկյան տակ, ուշադրության առարկա դարձնելով այն, վորպեսզի այդ կոմմունիստները, վորոնք շփվում են խորթ տարրերի հետ, նրանց հարաբերությունները չներաճեն կենցաղային իդեոլոգիական կապի այդ էլեմենտների հետ։

Տնտեսական և այլ բնագավառում աշխատողների ստուգման ժամանակ,—վորոնց կուսակցությունը դըրել է այնպիսի աշխատանքների, վորոնք պահանջում են անմիջականորեն շփումն պրոլետարիատին ոտար միջավայրի հետ,—անհրաժեշտ է հաշվի առնել այդ ընկերների աշխատանքների սպեցիֆիկ պայմանները և միևնույն ժամանակ ստուգել, թե արդյոք նրանց գործնական հարաբերությունները չեն ներաճում կենցաղային իդեոլոգիական կապերի այդ տարրերի հետ։

Կոմմունիստին այնպիսի վորակում տալը, ինչպիսին է «խորթ տարր» կամ «անհարազատների հետ կապված», ստուգող հանձնաժողովները պետք է ծայրահեղ շրջահայեցությամբ և զգուշությամբ գործածեն։ Ստուգվողին այդ բանում մեղադրել կարելի յե միայն այն դեպքում, յեթե ապացուցված է, վոր նա չի խզվել պրոլետարիատին խորթ դասակարգերի իդեոլոգիայից և կենցաղից կամ սիստեմատիկորեն կապ է պահպանում այդ դասակարգերի ներկայացուցիչների հետ, վորը վարկաբեկում է նրան վորպես կոմմունիստի և խախտում է բանվորների և աշխատավորու-



թյան դեպի պրոլետարիատի կուսակցությունն ունեցած վստահությունը։

22. Առաջներում ոպպոզիցիոն խմբակներին պատկանած և նրանցից հեռացած կոմմունիստներին ստուգելիս ստուգող հանձնաժողովները չպետք է սահմանափակվեն այդ կոմմունիստների հարցաքննությամբ, այլ պետք է ստուգեն նաև այն, թե ինչ է արված բջիջի կողմից այդ ընկերներին գաղափարականապես ներգործելու ուղղությամբ, տրոցկիստական ոպպոզիցիայի շարքային անդամների նկատմամբ կուսակցության XV համագումարի տված հրահանգի համաձայն։

23. Ստուգող հանձնաժողովների, ինչպես և կուսակցական բոլոր մյուս որգանների աշխատանքը պետք է ընթանա ամբողջ կուսակցության և սրա թըվում նաև ստուգվող կազմակերպության հսկողության տակ։ Յուրաքանչյուր բջիջ իր ընդհանուր ժողովում կարող է քննադատել ստուգող հանձնաժողովի ամեն մի վորոշումը, բողոքարկել նրա դեմ, չփոխելով, սակայն, այդ վորոշումը։

Ստուգող հանձնաժողովի անդամները պետք է հիշեն միշտ, վոր ներկուսակցական դեմոկրատիայի խախտման, ստուգման ժամանակ կոպտության և անտակտության համար նրանք իրենք յենթարկվելու յեն կուսակցական պատասխանատվության, վորպես զտման և ստուգման գործը վարկաբեկողներ։

## 4. ԶՏՄԱՆ ՅԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՏԱՐՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

24. Զտումից և ստուգումից առաջ ստուգող հանձնաժողովները կուսակցական կոմիտեյում, վերահսկիչ

հանձնաժողովում և բջիջի բյուրոյում գտնվող նյութերի հիման վրա մանրամասն ծանոթանում են ստուգման ենթակա բջիջների թե ընդհանուր վիճակին ու աշխատանքներին և թե այդ բջիջների անձնական կազմին և ստուգում են նախնական մատերիալների տվյալները։

25. Ստուգումն ու զտումը կատարվում է բջիջների դռնբաց ժողովներում (խոշոր բջիջներում ըստ ցեխերի, հերթափոխությունների և հիմնարկի առանձին բաժինների), ուր նախորոք լսվում և քննության է առնվում ստուգող հանձնաժողովի հայտարարությունը ստուգման և զտման նպատակի և խնդիրների մասին, և տվյալ բջիջի զեկուցումն ստուգվող կազմակերպության դրության մասին։

Առանձին կոմմունիստների ստուգումը բջիջների ժողովներում կատարվում է ստուգող հանձնաժողովի կողմից ստուգվողի կենսագրական տվյալների ընթերցումով, վորը բնութագրում է յուրաքանչյուր ստուգվողին. լսվում է ժողովներին մասնակցողների կողմից տրվող բնութագրությունը, բացասական կարծիքներն ու նրանց քննությունը ըստ էության։ Այդ ժողովներում առանձին կոմմունիստների հարցը համապատասխան քննության չի ենթարկվում, և նրանց մասին վորոշում չի կայացվում։

26. Բջիջների ստուգմանը և զտմանը նվիրված նիստերին լայն չափով ներգրավվում են անկուսակցական բանվորները, գյուղացիները և ծառայողները։ Այդ նպատակի համար ժողովները պետք է գումարվեն համապատասխան ձեռնարկների կամ հիմնարկների շենքերում կամ ակումբներում այնպիսի ժա-



մերին, վորոնք ապահովում են ավելի շատ թվով կուսակցականների և անկուսակցականների ներգրավումը։

Խորհրդային հիմնարկների կուսբջիջների զտմանը նվիրված ժողովներին պետք է մասնակից դարձնել այն ձեռնարկների կուսակցական և անկուսակցական բանվորներին, վորոնք կապված են տվյալ հիմնարկության աշխատանքի հետ։

**Ծանոթություն.**—Անհրաժեշտության դեպքում ստուգող հանձնաժողովները կարող են թույլ տալ բացի բջիջի դռնբաց նիստերից հրավիրել նաև դռնփակ ժողովներ։

27. Կուսակցության դռնբաց ժողովներում ստուգումը վերջացնելուց և առանձին կոմմունիստներին վերաբերող տվյալները լրացուցիչ կերպով ստուգելուց և պարզելուց հետո ստուգող հանձնաժողովներն իրենց նիստերում ստուգվող յուրաքանչյուր կոմմունիստի մասին կայացնում են իրենց վորոշումը։

28. Առանձին կոմմունիստների ստուգման և զտման պրոցեսում կատարվող բջիջների աշխատանքի վորակի ստուգումը պետք է ընդգրկի կուսակցական աշխատանքի կարևորագույն խնդիրները, համապատասխան այս կամ այն կատեգորիայի բջիջների այդ աշխատանքի պայմաններին և հատուկ խնդիրներին։

Բոլոր կատեգորիաներին պատկանող բջիջների համար ընդհանուր հարցերը պետք է լինեն.—կուսակցական դիսցիպլինայի վիճակը, ներկուսակցական դեմոկրատիայի դրությունն ու ինքնաքննադատության ծավալումը, մասսայական աշխատանքը, քաղաքում՝ վերաբերմունքը դեպի արտադրությունը և գյու-

ղում՝ կոլեկտիվացումը, իդեոլոգիական տատանումների և թեքումների դեմ մղվող պայքարը։

29. Բջիջի ստուգման և զտման ամբողջ աշխատանքը վերջացնելուց հետո ստուգող հանձնաժողովը տվյալ բջիջի դռնբաց ժողովում անում է հայտարարություն՝ հիմնավորելով յուրաքանչյուր կոմմունիստի վերաբերյալ ընդունած իր վորոշումները, և զեկուցում է տալիս՝ գնահատելով բջիջի ընդհանուր վիճակն ու աշխատանքի դրությունը։ Ստուգող հանձնաժողովի հայտարարությունն ու զեկուցումը կուսակցական ժողովում քննության են առնվում, ըստվորում բջիջն իրավունք ունի ստուգող հանձնաժողովի այս կամ այն վորոշումը—վորոնց հետ նա համաձայն չէ — խնդրել վերանայելու և կամ բողոքարկելու վերադաս որգաններին։

Ստուգման հետ կապված բջիջների յեզրափակման ժողովներն անհրաժեշտության դեպքում կարող են դռնփակ լինել։

30. Անձնական ստուգման արձանագրության մեջ արձանագրվում են ստուգվող յուրաքանչյուր կոմմունիստի մասին հետևյալ տվյալները.—ազգանուն, անուն և հայրանուն, վոր թվից է Համկոմկուսի անդամ, կուսակցական տոմսի կամ թեկնածուական քարտի №-ը, տարիքը, սոցիալական ծագումը, ընդհանուր կրթությունը, կատարած աշխատանքն ստուգման մոմենտին. Կարմիր բանակում լինելու ժամանակը, ծառայել է սպիտակ բանակում՝ կամավոր կերպով կամ մոբիլիզացիայի կարգով՝ ում կողմից, ինչով է զբաղվել մինչև 1917 թիվը, յեղել է այլ կուսակցությունների մեջ և վորքան ժամանակ։



Գյուղացիների նկատմամբ անհրաժեշտ է մատնանշել տնտեսության դրությունը, ստուգման մոմենտին նրանց տարած վճարովի կամ անվճար ընտրովի պաշտոնը, գյուղատնտեսական և սպառողական կոոպերացիայի անդամությունը և մասնավորապես մասնակցությունը կոլտնտեսությանը։

Արտադրական բանվորների նկատմամբ մատնանշել արտադրական ստաժը և վորակը, գյուղի հետ ունեցած տնտեսական կապը։

Նույնը պետք է կատարել խորհրդային ծառայող կոմմունիստների նկատմամբ։

Արձանագրության մեջ գրվում են նույնպես տվյալներ ստուգված ընկերոջ կուսակցական և հասարակական աշխատանքներին ցույց տված մասնակցության մասին և ստուգումով հաստատված կոմմունիստական ետիկայի խախտման և կուսակցական անկայունության փաստերը, կապը խորթ ելեմենտների հետ և այլն։ Բոլոր այս տվյալները մանրամասն ստուգվելուց և հաստատվելուց հետո զետեղվում են արձանագրության հիմնավորման «լսեցին» բաժնում։

Հանձնաժողովի վորոշումները—կուսակցությունից վտարելու և կամ կուսակցական տույժի յենթարկման մասին—«վորոշեցին» մասում պետք է ճշգրիտ հիմնավորված լինեն, ստուգմամբ հաստատված փաստերի նշումով։

Յուրաքանչյուր կոմմունիստի անձնական ստուգման գործին պետք է կցված լինեն բոլոր այն փաստաթղթերը, վորոնք հաստատում են արձանագրության մեջ գրված մեղադրանքները, և ստուգվողի բացասական բնութագրությունները։

Նման փաստաթղթերի բացակայության դեպքում պետք է մատնանշված լինի, թե ում խոսքերից է վերցրած մեղադրանքը, ում կողմից և ինչպես է ստուգվել այն։ Յերբեք չի թույլատրվում վորոշման ձևակերպումն անորոշ ձևով, ինչպես, որինակ՝ «վտարվում է մի շարք փաստերի պատճառով» կամ՝ «վորպես կուսակցության անպետք», «վտարել վորպես բալլաստ», և այլն։

Պետք է համառոտ, բայց պարզ և մեկին շեշտել, թե ինչ փաստերի մասին է խոսքը, ինչով «անպետք է», և կամ ինչու համար «բալլաստ» է և այլն։

31. Ստուգող հանձնաժողովներն իրավունք ունեն կուսակցական ամեն մի կազմակերպությունից և յուրաքանչյուր կոմմունիստից պահանջել տեղեկություններ, վորոնք վերաբերում են թե բջիջի աշխատանքներին ամբողջությամբ, և թե առանձին կոմմունիստի վորակի գնահատությանը։

Ստուգող հանձնաժողովը կարող է հարցուփորձ տնել անկուսակցական բանվորներին, ծառայողներին և գյուղացիներին։

32. Կուսակցության անդամի կամ թեկնածուի հարգելի պատճառով ստուգմանը նշանակված ժամկետին չներկայանալու դեպքում նա պետք է ստուգման յենթարկվի համապատասխան վերահսկիչ հանձնաժողովի կողմից վերադառնալուց հետո իր իսկ բջիջում։

Վորպես ընդհանուր կարգ՝ ստուգումը չպետք է կատարվի ընկերոջ բացակայության ժամանակ։ Կուսակցության բոլոր անդամները և թեկնածուները պարտավոր են ներկայանալ ստուգող հանձնաժողո-



վին—համաձայն վերջինիս հրավերի։ «Յուրաքանչյուր կոմմունիստ ստուգման է յենթարկվում այն բջիջում, վորտեղ նա հաշվի յե առնված մշտականապես (վորտեղ գտնվում է նրա հաշվառման քարտը)։ Այսպիսով մի կոմմունիստ, վորը հաշվառման է յենթարկված իր աշխատած հիմնարկի բջիջում, սակայն առանձին յելույթների համար կցված է ձեռնարկությանը, գըտման է յենթարկվում հիմնարկի բջիջում, բայց ստուգման ժամանակ հաշվի յե առնվում ձեռնարկության բջիջի կարծիքը։

Այն դեպքում, յերբ կոմմունիստը հաշվի յե առնված վոչ իր ծառայության (կամ ուսման) վայրի բջիջում, նրա ստուգումն անցնում է այս վերջինիս կից յեղած բջիջում, ըստվորում ստուգման ժամանակ անհրաժեշտ է ստուգվողի մասին կարծիք իմանալ նրա աշխատավայրից։

Նույնպես և այն դեպքերում, յերբ ընկերը տվյալ բջիջն է յեկել այլ կազմակերպություններից, հենց ստուգումից անմիջապես առաջ նա ստուգման է յենթարկվում այն բջիջում, ուր նա գտնվում է ստուգման մոմենտին, բայց այն պայմանով, վոր բնութագրության և սրան վերաբերյալ նյութերն ստացվեն այն կազմակերպությունից, վորտեղից նա յեկել է։

Կազմակերպությունները պարտավոր են անմիջապես ուղարկել ստուգող հանձնաժողովների կողմից պահանջված նյութերն ու տեղեկությունները։

**Ծանոթություն.**—Սեզոնային աշխատանքների համար յերկար ժամանակով յեկած կոմմունիստներին հաշվի առնելիս կուսակցական կո-

միտեները սեզոննիկների հաշվառման հետ միասին միաժամանակ այդ մասին տեղեկացնում են նրա մշտական բնակավայրի կազմակերպությանը, խնդրելով ուղարկել վերջինիս վերաբերող մատերիալները նրա մշտական բջիջից, վորպես կարգ՝ ստուգելով այն տվյալ աշխատանքի վայրում։

Ստուգման ընդհանուր կարգից դուրս են բերվում այն ընկերները, վորոնց վերաբերմամբ ստուգող հանձնաժողովը չի կարողանում հաստատել տեղում նրա բնութագրությանը վերաբերող կարևորագույն փաստերը (կուսակցական ստաժ, լուրջ մեղադրանքներ և այլն)։ Նման դեպքերում այդ ընկերներին վերաբերող գործերը հանձնվում են համապատասխան տեղական վերահսկիչ հանձնաժողովներին։

33. Ստուգող հանձնաժողովների բոլոր վորոշումներն ու վճիռներն ուժ են ձեռք բերում միայն այն ժամանակ, յերբ նրանց արձանագրությունները հաստատվում են համապատասխան վերահսկիչ հանձնաժողովների կողմից և համաձայնեցվում են կուսակցական համապատասխան կոմիտեների հետ։

34. Ստուգող հանձնաժողովի գործնական կազմակերպչական առաջարկներն ինչպես ամբողջ բջիջի, նույնպես և առանձին կոմմունիստի մասին, կուսակցական կոմիտեների կողմից կիրառվում են կյանքում—կուսակցական և խորհրդային աշխատանքի ղեկավարման ընդհանուր կարգով։

35. Ստուգող հանձնաժողովները կարող են ընկերներին աշխատանքից հեռացնելու մասին վորոշում կայացնել, յերբ նրանք վնասակար են համարում այդ



աշխատանքի ասպարեզում սրանց թողնելը, սակայն այդ վորոշման կիրառումը վերապահվում է կուսակցական համապատասխան կոմիտեյին։

Այդ վորոշումը հրապարակվում է միայն այն ժամանակ, յերբ ստուգող հանձնաժողովի վորոշումները հաստատվում են վերահսկիչ հանձնաժողովների և կուսակցական կոմիտեների կողմից։

36. Ստուգող հանձնաժողովի վորոշումները, բջիջի վերջին ժողովին հայտնելուց առաջ, պետք է հաղորդվեն կուսակցական համապատասխան կոմիտեներին ի գիտություն։

37. Բոլոր կուսակցական տոմսերն ու թեկնածուական քարտերն ստուգման են յենթարկվում նրանց մեջ գրված տեղեկությունների ճշտությունը հաստատելու տեսակետից։ Կուսանդամատոմսերն ու թեկնածուական քարտերը յետ են վերցվում միայն այն կոմմունիստներից, վորոնց կուսակցությունից վտարելու մասին ստուգող հանձնաժողովների վորոշումը համաձայնեցված է համապատասխան կուսակցական կոմիտեյի և վերահսկիչ հանձնաժողովի հետ։

Կուսակցական տույժի յենթարկման դեպքում ևս կոմմունիստի հաշվառման քարտում գրանցվում է այդ բանը միայն այն դեպքում, յերբ ստուգող հանձնաժողովի վորոշումը—կուստույժի մասին—հաստատված է լինում համապատասխան վերահսկիչ հանձնաժողովի կողմից։

38. Ստուգող հանձնաժողովների կողմից կուսակցությունից վտարված կոմմունիստները կուսակցական դռնփակ ժողովներ հաճախելու իրավունքից չեն զրկվում մինչև այն ժամանակ, յերբ վտարման մասին

վորոշումը հաստատվում է համապատասխան վերահըսկիչ հանձնաժողովի կողմից։

39. Ստուգման և զտման յենթակա չեն այն ընկերները, վորոնք ընդունվել են կուս թեկնածու, սակայն կանոնադրության համաձայն դեռևս վերջնականապես հաստատված չեն համապատասխան կուսորգանների կողմից։

## 5. ԶՏՄԱՆ ՅԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՅԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

40. Զտման և ստուգման ընթացքում շրջանային վերահսկիչ հանձնաժողովներն ուղարկում են պարբերաբար, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հաշվիճքաժնի տված ձևով, տեղեկագրեր թվական տվյալներով, վոչ ուշ քան շաբաթը մեկ անգամ, համապատասխան ազգային կոմկուսների ԿՎՀ.ներին, յերկրային և մարզային վերահսկիչ հանձնաժողովներին՝ պարբերաբար արվող նըման տեղեկագրերի պատճենները միաժամանակ ուղարկվում են ՀամԿ(բ)Կ Կ. Վերահսկիչ Հանձնաժողովի OMO բաժնին։

Ստուգման և զտման նյութերի մշակման գործը կատարվում է կուսակցական կոմիտեյի ապարատի կողմից՝ համապատասխան վերահսկիչ հանձնաժողովի ղեկավարությամբ։

41. Ստուգումը վերջանալուց հետո նույն կարգով ներկայացվում են հաշվետու զեկուցումներ յուրաքանչյուր ազգային շրջանի կուսակցությանը, յերկրային և կամ մարզային կազմակերպությանը—Համ.



Կ(բ)Կ Կենտվերահսկիչ հանձնաժողովի սահմանած ժամկետների համաձայն։

Զտման և ստուգման նյութերի մշակման հաշվետու զեկուցումների կազմելու գործը շրջաններում (նահանգներում) կատարվում է համապատասխան վերահսկիչ հանձնաժողովների միջոցով։

42. Ստուգող հանձնաժողովի վորոշումներից դժգոհ կուսանդամներն ու թեկնածուները կարող են բողոքել նրա դեմ տեղական վերահսկիչ հանձնաժողովին մեկ ամիս տևող ժամանակամիջոցում։ Տեղական վերահսկիչ հանձնաժողովի վորոշումներից դժգոհները կարող են բողոքել նրա դեմ—տեղական վերահսկիչ հանձնաժողովների միջոցով - վերադաս վերահսկիչ հանձնաժողովներին, իսկ վերջինիս վորոշման դեմ՝ ՀամԿ(բ)Կ ԿՎՀ-ին։ Տեղական ՎՀ.ները պարտավոր են այդ բողոքարկումները զտման հետ կապված ամբողջ գործի և բոլոր մատերիալների հետ միասին ուղարկել վերադաս այն վերահսկիչ հանձնաժողովին, ուր ուղղվում է տվյալ բողոքարկումը։ Շրջանային վերահսկիչ յանձնաժողովներին տեղական վերահսկիչ հանձնաժողովների վորոշումների դեմ բողոքարկման ժամկետը մեկ ամիս է, ԿՎՀ—յերկու ամիս է, սկսած այն որից, յերբ իր ձեռքի տակ է տվյալ վերահսկիչ հանձնաժողովի վորոշումը։

Հաշվառման քարտի վրա մնում է միայն ստուգման ժամանակ հանած ՎՀ-ի վերջնական վորոշումը։ Վերջին ստուգման ժամանակ հանած բոլոր մնացած վորոշումները վերացվում են։

43. Ստուգող հանձնաժողովները կուսակցությունից արտաքսվածներին և կուստույժերի յենթարկված-

ներին վոչ միայն պարտավոր են նրանց բացատրել բողոքարկման ժամանակի մասին, այլև ոգնել նրանց խորհուրդներով և ցուցմունքներով այն մասին, թե ինչպես գրել և ուղարկել բողոքարկման բնույթ կրող հայտարարությունները, ինչպես և ումից իմանալ բողոքարկման գործի հետևանքները, և այլն։ Նման ոգնությունն անհրաժեշտ է մանավանդ բանվոր, բատրակ և չքավոր գյուղացի կոմմունիստների նկատմամբ։

44. Վերահսկիչ հանձնաժողովներն ստուգող հանձնաժողովների արձանագրություններին ծանոթանալու ժամանակ կարող են և պարտավոր են վերաքննության առնել կուսակցությունից վտարվածների և կամ կուսակցական տույժի յենթարկվածների հարցը այն դեպքում ևս, յերբ վերջիններս չեն բողոքել ստուգող հանձնաժողովի վորոշումների դեմ, յեթե այդ վորոշումները բավարար չափով հիմնավորված չեն, և կամ յեթե ստուգումն անց է կացվել սույն հրահանգի հիմնական ցուցմունքների խախտումով։

Այդ դեպքում վերաքննությունը կատարվում է անպայման ստուգող հանձնաժողովի նախագահի կամ վորևէ անդամի ներկայությամբ, ըստ հնարավորության՝ ստուգվողի ներկայությամբ։

Վորպես կանոն, բողոքարկումները վերահսկիչ հանձնաժողովները քննության են առնում համապատասխան վորոշում հանած հանձնաժողովի նախագահի կամ վորևէ անդամի ներկայությամբ։ Տեղական վերահսկիչ հանձնաժողովի վորոշումների դեմ յեղած բողոքները մարզային և կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովներում քննվում են ըստ հնարավորու-



թյան մեղադրվողների ներկայությամբ և կամ տեղերը մեկնելու միջոցով։

45. Յեթե ստուգող հանձնաժողովն իր վորոշումները փոփոխման յենթարկելու հետ համաձայն չէ, ստուգհանձնաժողովն իրավունք ունի իր վորոշման այդ փոփոխության մասին բողոքել վերադաս վերահսկիչ հանձնաժողովին։

## ՑԱՆԿ


Էջ

Յեմ. Յարոսլավսկու զեկուցումը . . . . . . . . 3

Համ. Կ. (բ) Կ. անդամների զտման և թեկնածուների զտման և ստուգման մասին (բանաձև ընկ. Յարոսլավսկու զեկուցման առթիվ) . . 51

Հրահանգ Համ. Կ. (բ) Կ. շարքերի ընդհանուր զտման և ստուգման կազմակերպման ու կատարման մասին . . . . . . . . . 72



Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Անվան Публичная Библиот

10

**16** Всесоюзная партийная конференция

# О чистке и проверке членов и кандидатов ВКП (б)

1) Доклад Ем. Ярославского. 2) Постановление 16 партконференции. 3) Инструкция по чистке и проверке рядов ВКП (б).

**ԳԻՆԸ 20 ԿՈՊ.**

ՀՀ Ազգային գրադարան
NL0182504